

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Արցախի Շրջափակումն 100 Օր Ետք

Լաչինի միջանցքի փակումը բոլորեց իր 100-րդ օրը եւ 120 հազար Արցախցիներ կը շարունակեն ապրիլ շրջափակման մէջ կրելով բազում դժուարութիւններ, սակայն մերժելով ենթարկուիլ Ատրպէյճանի պայմաններուն:

Համատարած կոչերը, դատապարտումի խօսքերը եւ նոյնիսկի ՄԱԿ-ի Միջազգային Դատարանի որոշումը՝ միջանցքի արգելափակելու կապակցութեամբ, անտեսուեցան Պաքուի կողմէ, փոխարէնը Ատրպէյճան կը փորձէ հարցը ներկայացնել որպէս իր ներքին խնդիրը: Այս ընթացքին Արցախի ու Ատրպէյճանի ներկայացուցիչներուն միջեւ, Ռուս խաղաղապահներու միջնորդութեամբ տեղի ունեցած մի քանի հանդիպումները որեւէ արդիւնքի չհասան, երբ ատրպէյճանական կողմէ ուզեց օրակարգի վրայ դնել Արցախը Ատրպէյճանի կազմին մէջ մտնելու հարցը:

Այս ընթացքին Իլիամ Ալիեւ կը շարունակէ պատերազմով սպառնալ Հայաստանին ու Հայ ժողովուրդին: «Որպէսզի Հայաստանը հանգիստ ապրի 29 հազար քառակուսի քմ տարածքին՝ կայ մէկ պայման. անոնք պէտք է ընդունին մեր պայմանները՝ պաշտօնապէս ճանչնան Ղարաբաղը Ատրպէյճանի մաս», յայտարարած է բռնապետը, գրաւուած Հայկական Թալիշ գիւղ այցելութեան ընթացքին: Անգարայի մէջ կայացած Թրքական պետութիւններու ղեկավարներու զագաթնաժողովի ընթացքին Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ ներկայացուցած է տարածքային պահանջներ եւ յարձակման համար հող պատրաստող դրսեւորումներ՝ Հայաստանի Հանրապետութիւնը կոչելով «Արեւմտեան Ատրպէյճան»:

Ըստ երեւոյթին, Պաքուին անհանգիստ ըրած է Նիկոլ Փաշինեանի անցեալ շաբօւայ մամլոյ ասուլիսի ընթացքին օգտագործած «Ղարաբաղի ժողովուրդ եւ Իշխանութիւն» բառակապակցութիւնը: «Հայաստանի վարչապետը պէտք է հասկնայ, որ Ղարաբաղի շրջանի հայկական ծագման բնակչութեան իրաւունքները երբեք չեն կրնար բարձր ըլլալ շրջանի ատրպէյճանական բնակչութեան իրաւունքներէն», պնդած է Ատրպէյճանի արտաքին քաղաքական գերատեսչութեան խօսնակը:

Այս բոլորի լոյսին տակ ճիշդ գնահատական կատարեց Հայաստանի Արտաքին գործոց նախարարութիւնը յայտարարելով որ,

Արեւմուտքը Կը Փորձէ Գժտեցնել Ռուսիան Եւ Հայաստանը. Կը Դժգոհի Լաւրով Միրզոյեանի Հետ Հանդիպումէն Ետք

Արեւմուտքը կը փորձէ գժտեցնել Ռուսիան եւ Հայաստանը, այս մասին ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանի հետ հրաւիրած համատեղ ասուլիսին ըսաւ Ռուսիոյ արտաքին գործերու նախարար Սերգէյ Լաւրով:

«Մենք Արեւմտեան երկիրներու կողմէ կը տեսնենք անթաքոյց փորձեր՝ գժտեցնել Ռուսիան ու Հայաստանը, եկէք իրերը իրենց անունով կոչենք, խարխլել տարածաշրջանային անվտանգութեան ճարտարապետութիւնը՝ ելլելով ոչ թէ տարածաշրջանի երկիրներու, այլ սեփական աշխարհաքաղաքական շահերէն: Ես կը կարծեմ, որ նմանօրինակ փորձերը դատապարտուած են ձախողման: Մենք մանրամասն քննարկած ենք Լաչինի միջանցքին շուրջ եւ ընդհանուր Ղարաբաղի մէջ ստեղծուած իրավիճակի կարգաւորման ուղիները: Ընդգծած ենք բանակցային գործընթացի շուտափոյթ վերականգնման կարեւորութիւնը՝ Ռուսիոյ, Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներու եռակողմ պայմանաւորուածութեան բոլոր ուղղութիւններով», ըսաւ Լաւրով:

Խօսելով տարածաշրջանային հաղորդակցութիւններու ապաշրջափակման մասին՝ ան ըսաւ, որ



Սերգէյ Լաւրով եւ Արարատ Միրզոյեան Մոսկուայի մէջ կայացած միատեղ մամլոյ ասուլիսի ընթացքին

յոյս ունին, որ յառաջիկային փոխվարչապետերի գլխաւորութեամբ գործող եռակողմ աշխատանքային խումբը կը կարողանայ ձեռք բերել կոնկրէտ պայմանաւորուածութիւններ:

«մենք հանդէս ենք գալիս Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ սահմանազատման հարցերով յանձնաժողովի աշխատանքներու աշխուժացման օգտին՝ Ռուսիոյ աջակցութեամբ՝ համաձայն մեր ղեկավարներու պայմանաւորուած»:

ծուծեան: Ռուսիոյ կողմէ պատրաստակամութիւն կայ հետագային եւս նպաստել Պաքուի եւ Երեւանի միջեւ խաղաղութեան պայմանագրի ստորագրման», լաւեւեց Լաւրով:

Հայաստանի մէջ չկայ նպատակաւորութեամբ հակառուսական արշաւ, Լաւրովի հետ հրաւիրած համատեղ ասուլիսին ընթացքին այս մասին ըսաւ ՀՀ արտաքին գործերու նախարար Սերգէյ Լաւրով:

Հայ Ամերիկան Թանգարանի Շքեղ Ճաշկերոյթին Հանգանակուեցաւ 7 Միլիոն Տոլար



Անցեալ Կիրակի, Մարտ 19, 2023, Լոս Անճելոսի Fairmont հիւրանոցի դահլիճին մէջ, շուրջ հազար հոգիի ներկայութեամբ նշուեցաւ Հայ-Ամերիկեան Թանգարանի եւ մշակութային կեդրոնի շինարարութեան առաջին փուլի յաջող աւարտին նուիրուած տարեկան շքեղ ճաշկերոյթը (Gala):

Սրահին մէջ գետեղուած գոյգ լայնապատտառ հեռատեսիլներու միջոցով, ներկայները մօտէն ծանօթացան Թանգարանի շինարարական աշխատանքներու հետ առնչուող գործընթացին: Յայտագրի

գործադրութիւնն սկսաւ ԱՄՆ-ի եւ Հայաստանի գոյգ քայլերգներու յոտընկալ ունկնդրութեամբ (կատարողութեամբ սոփրանօ) Մարինէ Տէր Ղազարեանի: ԱՄՆ-ի Արեւմտեան շրջանի հոգեւոր առաջնորդներու հաւաքական աղօթքէն ետք Յովնան Սրբազան անոնց անունով տուաւ իր գնահատականն ու պատգամը պատմական կառուցի կապակցութեամբ:

Սոյն միջոցառումին հանդիսավար Գեւ Օրգեանի եւ պատուոյ

Խաղաղութեան Ալիեւի Պայմանը՝ Ղարաբաղը Պաշտօնապէս Ճանչնալ Ատրպէյճանի Մաս

«Որպէսզի Հայաստանը հանգիստ ապրի 29 հազար քառակուսի քմ տարածքին՝ կայ մէկ պայման. անոնք պէտք է ընդունին մեր պայմանները՝ պաշտօնապէս ճանչնան Ղարաբաղը Ատրպէյճանի մաս, մեր պայմաններու հիմքով կատարեն սահմանազատման աշխատանքները», ըսած է Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը՝ լաւեւելով, որ միայն այս պարագային անոնք կրնան հանգիստ ապրիլ 29 հազար քառակուսի քմ տարածքին, ինչպէս արդէն այդ կը փափաքին:

Անոր խօսքերով՝ ատրպէյճանական տարածքներու 30 տարուան բռնագրաւման, պատերազմի, յետպատերազմական իրողութիւնները պէտք է գտնեն եւ պիտի գտնեն իրենց արտացոլումը խաղաղ բանակցութիւններուն մէջ:

«Հակառակ պարագային որեւէ խաղաղութեան համաձայնութիւն պիտի չըլլայ», յայտարարած է Ալիեւը թալիշ գիւղին մէջ:

ԸՆԾԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Միրզոյեան-Լաւրով. Եռակողմ Յայտարարութիւնների Դէ Ֆակտո «Փլուզումը»

ՅԱԿՈՒԲ ԲԱՂԱԼԵԱՆ

Խնդիրների լուծման բանալին եռակողմ յայտարարութիւններ ըլլալու է, Մոսկովայում Հայաստանի արտգործնախարարի հետ հանդիպման մեկնարկին ասել է ՌԴ արտգործնախարար Լաւրովը: Արարատ Միրզոյեանն իր բացման խօսքում նշել է, որ Հայ եռակողմ յայտարարութեան մի կէտ, որ Պաքուն չի խախտել: Լաւրովի եւ Միրզոյեանի յայտարարութիւններից ստացուող տպաւորութիւնն այն է, որ Մոսկովայում երեւանը տարբեր գնահատական ունեն եռակողմ յայտարարութիւնների բովանդակութեան կատարման առնչութեամբ: Լաւրովը յայտարարել է, որ «ինչպէս եւ գրուած է եռակողմ յայտարարութիւններում, պատրաստ ենք ամէն կերպ աջակցել տրանսպորտային, հեռահաղորդակցային կոմունիկացիաների ապաշրջափոխմանը, հայ-ատրպէյձանական սահմանի սահմանազատմանն ու սահմանազամանը, խաղաղութեան պայմանագրի պարամետրերի համաձայնեցմանը»:

Ուշադրութեան է արժանի, որ ՌԴ արտգործնախարարը չի խօսում Լաւրովի միջանցքի արգելափակման, Արցախում ՌԴ խաղա-

ղապահների պատասխանատուութեան գոտում իրավիճակի կառավարման եւ անվտանգութեան սպառնալիքների չէզոքացման, պարզապէս սպանութիւնների մասին, որ իրականացնում են ատրպէյձանցիները: Նա մէջբերում է տրանսպորտային հաղորդողներին, սահմանազատման հարցերը, ինչի տողատակում գրեց այն է, որ Լաւրովը այդ ուղղութեամբ Երեւանի քայքայում է պայմանաւորում կամ տեսնում մնացեալ ուղղութիւններով Պաքուի գործողութիւնների «կառավարումը»: Այդ համատեքստում էլ Արարատ Միրզոյեանն է նկատում, որ Հայ գրեթէ կետ, որ չի խախտել Պաքուն, հետեւաբար «հիմնաւոր» է Երեւանին որեւէ դիտողութիւն ներկայացնելը, եթէ անգամ կան որոշ կէտեր, որոնք առնչութեամբ Երեւանը չի շտապում անել քայլեր, որոնք ենթադրում են: Մեծ հաշուով, սա կարող է նշանակել, որ արտգործնախարարների մոսկովեան հանդիպումը ի ցոյց է դնում եռակողմ յայտարարութիւնների բովանդակային ճգնաժամը: Եւ դա թերեւս զարմանալի կամ անսպասելի էլ է, նկատի ունենալով այն, որ դրանց ընդունման պահից ի վեր աշխարհը ենթարկուել ու շարունակում է ենթարկուել հիմնարար

փոփոխութիւնների: Եռակողմ այսպէս ասած վերջին յայտարարութիւնը եղել է 2021 թուականի Նոյեմբերի 26-ին Սոչիում, որ նախորդ՝ Նոյեմբերի 9-ի եւ Յունուարի 11-ի յայտարարութիւնների շարունակութիւնն էր: 2022 թուականի Փետրուարի 22-24-ին աշխարհը մտել է մի նոր շրջափուլ, որում գործնականում ամէն օր փլուզում է դրանից առաջ եղած մի ինչ որ բան: Եւ «տրամաբանական» է, որ փլուզումները հասնելու են կամ հասնելու էին նաեւ այդ եռակողմ յայտարարութիւններին: Այս հանգամանք պարզ է թերեւս բոլորի, այդ թւում առաջին հերթին Մոսկովայի համար: Պարզապէս, Ռուսաստանն այժմ չունի դրան փոխարինող որեւէ այլ ծրարելու եւ Ռուսաստանի «պլան մինիմումը» թերեւս ղեկի ու եռակողմ յայտարարութիւններին յղումները ներկայումս միտում են ոչ թէ բուն այդ բովանդակութիւնը կեանքի կոչելուն, այլ նուազագոյն խնդրը լուծելուն: Կը ստացուի, թէ ոչ, այլ հարց է: Ընդ որում, Հայաստանի համար կարեւոր է, որ դա ստացուի, որովհետեւ հակառակ պարագայում նշանակելու է, որ եռակողմ յայտարարութիւնների փլուզումով

փլուզում է կովկասի կայունութեան այն թէկուզ փուխր փաստաթղթային հիմքը, որ գոյութիւն ունէր 44-օրեայ պատերազմի հրադադարից յետոյ: Ըստ ամենայնի այդ դիտակցմամբ է նաեւ, որ Արարատ Միրզոյեանը Լաւրովի հետ հանդիպմանը յայտարարել է, որ Հայաստանը պատրաստ է գործադրել բոլոր ջանքերը՝ ՌԴ հետ յարաբերութիւնը խորացնելու համար: Յատկանշական է նաեւ Լաւրովի յայտարարութիւնը, որ հնչեց արդեն հանդիպումից հետո: Նրա խոսքով, Արարատ Միրզոյեանի հետ խօսել են ոչ թէ փոխադարձ դիտողութիւնների տրամաբանութեամբ, այլ ազնուօրէն քննարկել են այն օբիեկտիւ իրավիճակը, որ առկայ է եւ որը չի համապատասխանում եռակողմ յայտարարութիւնների բովանդակութեանը, ու քննարկել են քայլեր, որ հնարաւոր է անել իրավիճակը եռակողմի հուն վերադարձնելու համար: Լաւրովը յայտարարել է, թէ իրեն թւում է, որ այսօր եկել են որոշակի համաձայնութեան: Այդուհանդերձ, թերեւս խօսել բուն եռակողմ բովանդակութեան վերադարձի եւ իրագործման մասին, կը լինի «գետնից կտրուած», եւ «վերադարձ հուն» դիտարկելիս ըստ ամենայնի պէտք է նկատի ունենալ իրավիճակի կառավարելիութեան հանգամանքը, որի տակ սակայն կը շարունակի լինել թերեւս բաւականին փխրուն բովանդակութիւն:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Նոյնաբովանդակ Ուղերձներ՝ ՌԴ-ից եւ Արեւմուտքից

ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՆԱՏՕ-ի նախկին գլխաւոր քարտուղար Անդերս Ֆոնգ Ռասմուսենի՝ Հայաստան կատարած պաշտօնական այցի յաջորդ օրը Երեւան ժամանեց ՀԱՊԿ-ի նորանշանակ գլխաւոր քարտուղար Իմանգալի Թասմագամբետովը: Վերջինս շրջաց եւ դիտարկումներ կատարեց հայ-ատրպէյձանական սահմանի այն հատուածներում, որտեղ 2021 թ. Մարտի եւ 2022 թ. Սեպտեմբերի 13-14-ի ռազմական գործողութիւնների հետեւանքով ներխուժել են ատրպէյձանական ստորաբաժանումները: Վերոնշեալ այցերը փաստում են Հայաստանի եւ Արցախի շուրջ լարուած իրավիճակի մասին, որի հեղինակը պաշտօնական Պաքուն է՝ իր սադրիչ գործողութիւններով եւ կեղծ տեղեկատուութեան տարածմամբ:

Նման լարուած իրավիճակի պայմաններում լիովին օրինաչափ է, որ Հայաստանն օգտագործում է իր անվտանգային համակարգի ներքին եւ արտաքին ողջ գործիքակազմը: Այդ ընթացքում Ատրպէյձանը ոչ միայն չի դադարեցնում ռազմական սադրանքի հիմք դարձած կեղծ տեղեկատուութեան տարածումը, այլեւ դա արդէն իր առաջին դէմքի մակարդակով է հնչեցնում:

Անքարայում անցկացուած Թրքական պետութիւնների կազմակերպութեան գազաթնամոզող ժամանակ Պաքուի բռնապետը զարգացրեց ադրբէյձանական քարոզչամեքենայի՝ պարբերաբար տարածուող ապատեղեկատուութիւնը՝ պնդելով, թէ Հայաստանը խախտել է 2020 թ. Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութիւնը, ընդ որում՝ այն հիմնաւորելով իրականութեանը չհամապատասխանող տեղեկութեամբ, թէ, իբր,

Արցախում Հայաստանը գինուած ուժեր ունի: Ատրպէյձանի ղեկավարը նաեւ յայտարարեց, թէ Հայաստանը չի կատարում եռակողմ յայտարարութեամբ ամրագրուած, այսպէս կոչուած, «Չանգեզուրի միջանցքի» բացումը:

Այստեղ պէտք է արձանագրել, որ Ալիեւը կեղծիքի տարածման լաբիրինթոսում այնպէս է խճճուել, որ արդէն հակասում է ինքն իրեն: Նոյն Ալիեւն էր նախկինում յայտարարել, թէ եռակողմ յայտարարութեան մէջ «Չանգեզուրի միջանցք» ձեւակերպում չկայ եւ ինքն է այդ ձեւակերպումը յետագայում շրջանառել:

Քաջածանօթ լինելով ատրպէյձանական գործելու գին, որ կեղծ յայտարարութիւններին հետեւում են ռազմական սադրանքները, Անքարայում արուած այդ յայտարարութիւնից յետոյ ՀՀ ԱԳՆ-ն պարտադրուած էր հրապարակայնօրէն պարզաբանել, որ Ալիեւի տարածած ապատեղեկատուութիւնը ռազմական սադրանքի նախերգանք է եւ որ Հայաստանը բազմիցս յայտարարել է, թէ Արցախում գինուած ուժերի ստորաբաժանումներ եւ ներկայացուցիչներ չունի:

Նախկին նման իրավիճակներից այսօրուայ վիճակը տարբերում է նրանով, որ իր ղեկավարի բերանով Ատրպէյձանը մեղադրանքներն ուղղում է ՌԴ-ի ուղղութեամբ՝ նախ տարածելով կեղծ տեսագրութիւն եւ լուր, թէ ռուս խաղաղապահների ուղեկցութեամբ ռազմական շարասիւն է Հայաստանից մտնել Արցախ, այնուհետեւ դրա հիման վրայ պնդելով, թէ խախտում է Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութիւնը:

Բոլորի համար պարզ էր, որ

դրանք Ռուսաստանի «բանջարանոցը նետուած քարեր էին», իսկ եթէ սրան գումարուեն ատրպէյձանական սոցիալական ցանցերի տիրոջթիւններում տարածուող տեսագրութիւններն այն մասին, որ Արցախի հետ շփման գծի տարածք, ասել է թէ՛ ՌԴ խաղաղապահների պատասխանատուութեան գոտի ատրպէյձանական գինուածի ստորաբաժանումներ են տեղափոխուել, ապա պատկերն ամբողջական կը լինի:

Իրադարձութիւնների նման սցենարային զարգացման ֆոնին լիովին օրինաչափ էր, որ ՌԴ նախագահ Վլադիմիր Փութինը հեռախոսագրոց ունեցաւ Անքարայից վերադարձած Ալիեւի հետ: Վերեւում շարադրուած գործընթացների տրամաբանական շղթայի ֆոնին անիմաստ է ընթերցել հեռախոսագրոցի մասին տարածուած պաշտօնական հաղորդագրութեան արարողակարգային ձեւակերպումները, քանի որ բոլորի համար պարզ է, թէ ինչի մասին են խօսել երկրների առաջնորդները: Արցախի ուղղութեամբ ատրպէյձանական ռազմական սադրանքը Ռուսաստանին բացառապէս ճակատային հարուած կը նշանակի՝ վերջինիս չթողնելով այլընտրանքային ճանապարհ:

ՀԱՊԿ գլխաւոր քարտուղարի՝ Հայաստան կատարած քայլը, թերեւս, այդ մասին ուղերձ է Ալիեւին: Նոյնաբովանդակ ուղերձ է յղուել նաեւ միւս բեւեռից՝ ՆԱՏՕ-ի նախկին գլխաւոր քարտուղարի այցով: Բայց Ատրպէյձանի սադրիչ գործողութիւններն այսօր միանշանակ կարեւորում են տարածաշրջանում կայունութեանը նպաստող միջազգային մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտութիւնը:
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈՒԿՐԱՏ ՅԱՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱՋԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly
Organ of **the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>


(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

«Բարեփոխումների Օրակարգից Ոչ Մի Վայրկեան Չպետք Է Շեղուենք»։ Զանդիպած ԵՆ Զայաստանի Վարչապետը Ու Նախագահը



ՀՀ Նախագահն ու վարչապետը հանդիպման ընթացքին

«Բարեփոխումների օրակարգից ոչ մի վայրկեան չպետք է շեղուենք», - յայտարարած է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը նախագահ Վահագն Խաչատրեանի հետ հանդիպման ընթացքին:

Նախագահ Խաչատրեանն իր հերթին ընդգծած է. «Ես հասկանում եմ, թե ինչ դժուար է այսօր դիմակայել այն բոլոր դժուարություններին, որոնց առջև մենք կանգնած ենք: Իսկ այդ դժուարությունները հիմնականում մեր անվտանգութեան հետ են կապուած: Դուք այդ հնարաւորութիւնը տուեցիք մեր հասարակութեանը լրագրողների միջոցով՝ Ձեր մամուլի ասուլիսի, կառավարութեան Ձեր ելույթի ժամանակ»:

«Հիմա այս ոճը, որը ժողովրդավարութեան արդիւնք է, հնարաւորութիւն է տալիս բոլորին, որ իրենք եւս մասնակից դառնան պետութեան մէջ տեղի ունեցող իրադարձութիւններին: Յուսով եմ՝ սա շարունակուելու է, եւ դրանում նաեւ մեր երկրի առջև կանգնած ինչ-որ խնդիրների կ'անդրադառնանք՝ լաւ կամ վատ», - ըսած է նախագահը:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը կարեւորելով հանրութեան հետ շարունակ հաղորդակցութեան

մէջ ըլլալը՝ նշած է. «Ըստ էութեան, դա ուղղակի արձանագրում է, որ մենք պետք է հանրութեան հետ հաղորդակցուենք»:

«Պիտի նաեւ նշեմ՝ ինչ-որ մի ժամանակ ես արձանագրեցի, որ շատ պրոցեսներ կան, որոնց նպատակը հէնց այդ հաղորդակցութիւնը թոյլ չտալն է:

Եզրափակելով Նիկոլ Փաշինյանը ըսած է. «Այո, ակնյայտօրէն, անվտանգութիւնը, արտաքին անվտանգութեան եւ խաղաղութեան ապահովումը բացարձակ առաջնահերթութիւն են, եւ նաեւ դա է պատճառը, որ մեր համատեղ աշխատանքը, ըստ էութեան, մեր օրակարգի մեծ մասը նուիրուած է դրան: Բայց ինձ համար կարեւոր է նաեւ, որ չնայած այդ ամէնին՝ մենք բարեփոխումների օրակարգը ոչ միայն չենք ձախողել, այլեւ, ընդհակառակը, հէնց կառավարութեան հաշուետուութեան գեկույցի առանցքային միտքը դա է, որ այս ամէն ինչին մեր արձագանքը ինչ-որ առումով պէտք է լինի ասիմետրիկ: Ի՞նչ նկատի ունեմ՝ մենք զարգացման օրակարգից, բարեփոխումների օրակարգից ոչ մի վայրկեան չպետք է շեղուենք՝ իհարկէ, շարունակելով աւելի ու աւելի կենտրոնացած մնալ անվտանգային օրակարգի վրայ է:

Ապօրինի Ծագում Ունեցող Գոյքի Բռնագանձման Գործով Առաջին Վճիռը Կայացուած Է

Պետութեան պիտի վերադարձուի շուրջ 81 միլիոն 962 հազար 500 դրամի պատճառուած վնասը, կը յայտնէ Բարձրագոյն Դատական Խորհուրդը՝ տեղեկացնելով, որ ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործով առաջին վճիռը կայացուած է:

Ըստ Խորհուրդին՝ կողմերուն միջեւ հաշտութեան համաձայնագիր հաստատուած է, որուն շնորհիւ ՀՖՑ «տեխնիկական կեդրոն-ակադեմիա» ընկերութեան տնօրէն Արթուր Մանուկեանը պետութեան պիտի վերադարձնէ Երեւանի Մարա Աղբիւր փողոցին յարակից հողատարածքը:

Աժ Յանձնաժողովը Բացասական Եզրակացութիւն Տուաւ Սեդա Սաֆարեանի Լիազօրութիւնները Դադրեցնելու Հարցով ՍԴ Դիմելու Նախագիծին

Սահմանադրական Դատարանի դատաւոր Սեդա Սաֆարեանին վերաբերող «Հայաստան» խմբակցութեան որոշման նախագիծը բացասական եզրակացութեան արժանացաւ խորհրդարանի Պետաիրաւական Հարցերու Յանձնաժողովին մէջ:

Անցեալ տարի իշխանական խմբակցութեան ձայներով Սահմանադրական Դատարանի դատաւոր ընտրուած Սաֆարեանը, ըստ ընդդիմութեան եւ խումբ մը փաստաբաններու, զբաղած է բարձր դատարանի դատաւորի պաշտօնի հետ անհամատեղելի գործունէութեամբ՝ ձեռնարկատիրութեամբ:

Սեդա Սաֆարեանը «Ազատութեան» հետ զրոյցին չէր հերքած, որ ՍԴ դատաւորի կարգավիճակով դիմած է վերաքննիչ, բայց չէր նշում էր, որ այդ ոչ թէ նոր բողոք է, այլ մինչեւ դատաւորի լիազօրութիւնները ստանձնելը ներկայացուցած բողոքի շարունակութիւնը:

Օնիկ Գասպարեանը Կրկին Մասնակցած Է 44-Օրեայի Հանգամանքները Ուսումնասիրող Քննիչ Յանձնաժողովի Նիստին

Ձինուած Ուժերու զխաւոր շտաբի նախկին պետ Օնիկ Գասպարեանը կրկին մասնակցած է 44-օրեայ պատերազմի հանգամանքները ուսումնասիրող Ազգային Ժողովի Քննիչ Յանձնաժողովի նիստին, «Ազատութեան» փոխանցեց յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեանը:

Նիստն ընթացած է փակ դռներու ետին:

Նիստին յետոյ Քոչարեան ըսած է, որ քննարկած են բոլոր մանրութիւնները, սկսած՝ պատերազմէն առաջ բանակի վիճակէն, մինչեւ սպառազինութեան, անձնակազմի համալրման, աշխարհագրորէ ըլլալը ըլլալու հարցեր: Քննիչ Յանձնաժողովի ղեկավարը դրուատանքի խօսքեր հնչեցուց Օնիկ Գասպարեանի հասցէին, նաեւ ըսաւ, որ ոեւէ մէկը անոր չափ աւանդ ունի Ձինուած Ուժերուն մէջ, զիտելիքնեցիւրով ալ չի կրնար մրցիլ:

Գասպարեանը 2020-ի Նոյեմբեր 17-ին յայտնած էր, որ պատերազմին 4-րդ օրը Անվտանգութեան Խորհուրդի նիստին ներկայացուցած է հայկական կողմին կորուստները եւ ստեղծուած իրադր-



Ձինուած Ուժերու զխաւոր շտաբի նախկին պետ Օնիկ Գասպարեան

րութեան վերաբերեալ Ձինուած Ուժերուն գնահատականը եւ առաջարկած է երկու-երեք օրուան ընթացքին անհրաժեշտ միջոցներու ձեռնարկել՝ պատերազմը կանգնեցնելու համար: Օնիկ Գասպարեանի պաշտօնակազմին յետոյ իշխանութիւնները, Նիկոլ Փաշինյանի զխաւորութեամբ, հերքեցին որ բանակին ղեկավարը առաջարկած է անյապաղ կանգնեցնել պատերազմը:

Դատախազութիւնը Կը Պահանջէ Յովիկ Արահամեանի Ընտանիքէն Բռնագանձել Ապօրինի Ծագում Ունեցող 59 Անշարժ Գոյք

Հակափտածութեան Դատարանը վարույթ ընդունած է ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման վերաբերեալ հերթական՝ 30-րդ եւ 31-րդ հայցադիմումները:

Մէկ հայցադիմումով Գլխաւոր Դատախազութեան ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործերով վարչութիւնը պահանջ ներկայացուցած է դատարանին՝ «Հիւսիս-Հարաւ ճանապարհային միջանցք» ծրագրի «Թրանշ 1» եւ «Թրանշ 2» հատուածներու կապալառու սպանական «Քորսան Քորուխամ Քոնսթրուքցիոն» ընկերութեան հայաստանեան մասնաճիւղի ենթակապալառու «Փոլիթրանսթորֆ» ընկերութեան բաժնետէր Գ.Վ.-էն յօգուտ Հայաստանի Հանրապետութեան որպէս ապօրինի ծագում ունեցող գոյք բռնագանձել՝

Երեւան քաղաքի Աջափնեակ համայնքի Վահագնի թաղամասի Ն. Շնորհալի փողոցին վրայ գտնուող բնակելի տունը, Չիտաբաճութեան միջոց, 3 իրաւաբանական անձերու մէջ մասնակցութիւն, իսկ անհնարինութեան պարագային՝ անոնց միջին շուկայական արժէքը, որ ընդհանուր կը կազմէ աւելի քան 163 միլիոն դրամ:

33 միլիոն դրամ՝ որպէս ապօրինի եկամուտի մնացորդի եւ օրինական եկամտներով չհիմնաւորուող, բարեխիղճ երրորդ անձերու փոխանցուած դրամի հանրագումար:

Միւս հայցադիմումով ՀՀ Գլխաւոր Դատախազութեան ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործերով վարչութիւնը պահանջ ներկայացուցած է դատարանին ՀՀ տարածքային կառավարման նախկին նախարար, Աժ նախկին նախկին, նախկին ՀՀ վարչապետ Յ.Ա.-էն, անոր կնոջ մէջ Ջ.Ա.-էն, որդիին, դուստրերէն, իրեն փոխկապակցուած այլ անձերէ (աշխատակիցներ, ազգականներ եւ



Նախկին ՀՀ վարչապետ՝ Յովիկ Արահամեան

անոնց ամուսիններ) յօգուտ Հայաստանի Հանրապետութեան բռնագանձել՝

59 անշարժ գոյք, որմէ 15-ը՝ Երեւան քաղաքին մէջ, մեծաւ մասամբ Կեդրոն վարչական շրջանին մէջ, 12-ը Արարատի մարզի Միւջեան համայնքին մէջ, 10-ը՝ Նարեկ համայնքին մէջ, 2-ը՝ Կոտայքի մարզ, Արզական համայնքին մէջ, 6-ը՝ Կոտայքի մարզ Մաղկաձոր համայնքին մէջ, 1-ը՝ Վայոց Ձորի մարզ, Ձերմուկ համայնքին մէջ, 1-ը՝ Գեղարքունիքի մարզ, Սեւան համայնքին մէջ, 6-ը՝ Տաւուշի մարզ, Դիլիջան համայնքին մէջ, 3-ը Կոտայքի մարզ, Մեղրաձոր համայնքին մէջ, 1-ը՝ Արարատի մարզ, Մարմարաշեն համայնքին մէջ, 1-ը Արարատի մարզ, Այնթապ համայնքին մէջ, 1-ը՝ Արարատի մարզ, Արեւաբոյր համայնքին մէջ, 4 ինքնաշարժ, 20 ընկերութիւններու մասնակցութիւններ եւ բաժնետոմսեր, շուկայականէն հասկանալի ջրածնային արժէքով օտարուած 9 գոյքերու շուկայական արժէքներ՝ ընդհանուր՝ 1 միլիոն 628 միլիոն 277 հազար 90 դրամ:

ԼՈՒՐԵՐ

Վարչապետ Փաշինյանի Ռեզնանսը Եւ ԱՄՆ Պետական Քարտուղարին Յետ



Վարչապետ Նիկոլ Փաշինյանի հեռախոսազրույցը ունեցած է Ամերիկայի Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Էնթոնի Բլինքենի Պլինքենի հետ:

Զրուցակիցները քննարկած են Ատրպէյճանի կողմէ Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակման հետեւանքով ստեղծուած մարդասիրական ճգնաժամին վերաբերող հարցեր:

Նիկոլ Փաշինյանը եւ Էնթոնի Բլինքենը միտքեր փոխանակած են Հայաստան-Ատրպէյճան յարաբերութիւններու կարգաւորման, տարածաշրջանին մէջ հա-

ղորդակցութեան ուղիներու բացման հեռանկարներու շուրջ: ԱՄՆ պետական քարտուղարը վերահաստատած է Լաչինի միջանցքը անյապաղ վերաբանալու մասին իր կոչը եւ ընդգծած, որ ԱՄՆ-ն պատրաստակամ է շարունակելու աջակցութիւնը վերոնշեալ գործընթացներուն:

Հեռախոսազրույցի ընթացքին վարչապետ Փաշինյանի մտահոգութիւնն յայտնած է վերջին շրջանին Ատրպէյճանի կողմէ աճող յարձակողական հռետորաբանութեան առնչութեամբ:

Ալէն Սիմոնեան. «Ցաւալի է Որ Զախարովան Զ'անդրադառնար Ատրպէյճանի Արձագանգին»

ՀՀ ԱԺ նախագահը Ազգային ժողովին մէջ լրագրողներու հետ զրույցին, անդրադառնալով Ռուսիոյ Արտաքին Գործերու Նախարարութեան խօսնակ Մարիա Զախարովայի յայտարարութեան, թէ ՀՀ իշխանութիւններու խիղճին կը թողեն ԼՂ ճակատագիրը երրորդ երկիրներու պատասխանատուութեան թողելու փորձերը, նշեց.

«Ռուսական առաջարկները, որ մինչ օրս եղել են, մեր կողմից ընդունուել են, եւ խնդիրը եղել է ատրպէյճանական կողմի անհամաձայնութեան մէջ: Կարծում եմ՝ ՌԴ ԱԳՆ-ն պէտք է աւելի ուշադիր լինի ատրպէյճանական կողմի արձագանգին, որովհետեւ ՀՀ-ն մշտապէս՝ 99% դէպքերու, ռուսական առաջարկներին իր համաձայնութիւնը տուել է: Ցաւալի է, որ տիկին Զախարովան չի անդրադառնում Ատրպէյճանի արձագանգին»:

ԱԺ նախագահը նաեւ նշեց, որ Ռուսիան ինք ստորագրած է այդ փաստաթուղթը (Արցախի անվ-



ՀՀ ԱԺ նախագահը Ազգային ժողովի Ալէն Սիմոնեան

տանգութիւնը երաշխաւորելու մը.) եւ ստանձնած է այդ պարտաւորութիւնները: Ալէն Սիմոնեանը յիշեցուց նաեւ, որ Ատրպէյճանը մինչեւ հիմա չէ հաստատած ռուս խաղաղապահներուն մանտաթը:

Ատրպէյճանը Ամէն Ինչ Անում Է Տարածաշրջանում Խաղաղութիւնը Անհնար Դարձնելու Համար. Հայաստանի ԱԳՆ

Պաշտօնական Երեւանը յայտարարում է՝ Ատրպէյճանն ամէն ինչ անում է տարածաշրջանում խաղաղութիւնն անհնար դարձնելու համար: Արձագանքելով Թաւրիշում Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի ելոյթին՝ Հայաստանի արտգործնախարարութիւնն կ'ընդգծէ որ, Ատրպէյճանը իր ակրեսիւ խօսքերով եւ գործելակերպով Լեռնային Ղարաբաղի հանցագործութիւններու եւ Հայաստանի նկատմամբ նոր յարձակումի նախապատրաստութիւններ կը տեսնէ:

«Ստեղծուած իրավիճակում անհրաժեշտ է ցեղասպանութիւնների կանխարգելման միջազգային մեխանիզմների գործարկումը, միջազգային փաստաճառաքելութեան գործողումը Լաչինի միջանցք եւ Լեռնային Ղարաբաղ, ինչպէս նաեւ՝ Ատրպէյճանի ագրեսիւ գործողութիւնների եւ քաղաքականութեան հասցեական դատապարտումը: Միեւնոյն ժամանակ Հայաստանի Հանրապետութիւնն արտայայտում է իր վստահութիւնը խաղաղութեան օրակարգին՝ 2020 թուականի նոյեմբերի

Պետական Քարտուղարութիւնը Իր Զեկոյցին Մէջ Անդրադարձած Է Պաքուի Զինուժի Վայրագութիւններուն Եւ Հայաստանի Մասին

ԱՄՆ Պետական Քարտուղարութիւնը հրատարակած է Հայաստանի մէջ մարդու իրաւունքներու իրավիճակին վերաբերեալ զեկոյց, որուն մէջ մանրամասն անդրադարձած է նաեւ Հայաստանի դէմ սեպտեմբերեան յարձակման ընթացքին ատրպէյճանցի զինուորներու թոյլ տուած վայրագութիւններուն:

Զեկոյցին մէջ կը նշուի հաղորդումներու մասին, որ սեպտեմբերեան հակամարտութեան ընթացքին ատրպէյճանական ուժերը իրագործած են անօրինական սպանութիւններ, դաժան եւ անմարդկային վերաբերմունքի ենթարկած են հայ զինուորականները:

Կը նշուի, որ Կարմիր խաչի միջազգային կոմիտէն ուսումնասիրած է Ատրպէյճանի հետ հակամարտութեան հետեւանքով անհետ կորսուած անձերուն դէպքերը: Կը նշուի, որ 2020 թուականի աշնան պատերազմէն յետոյ 203 մարդ (այդ շարքին՝ 20 քաղաքացիական անձ) կը համարուի անհետ կորսուած, իսկ Սեպտեմբեր 13-14-ի հակամարտութեան հետեւանքով անհետ կորսուած կը համարուի 3 զինուորական:

ԱՄՆ Պետական Քարտուղարութիւնը կ'անդրադառնայ նաեւ ատրպէյճանցի զինուորներու կողմէ 7 հայ զինուորի անօրինական մահապատիժին, որ, Human Rights Watch հասարակական կազմակերպութեան եւ Bellingcat-ի հետաքննող լրագրողներու հաւաստմամբ, նկարահանուած է 2022 թուականի Սեպտեմբերի կէսերուն:

Զեկոյցը նաեւ կը յիշատակէ սեպտեմբերեան հակամարտութեան ընթացքին հայ կին զինուորներու մարմիններուն նկատմամբ անմարդկային վերաբերմունքի դէպքերը, ատրպէյճանական ուժերուն



կողմէ քաղաքացիական ենթակառուցուածքներուն հարուածները, շտապ օգնութեան ինքնաշարժներու թիրախաւորումը:

Հայաստանի մէջ դատարաններն անկախ չեն. անոր վկայութիւնն են փտածութեան եւ քաղաքական ազդեցութեան երեւոյթները, բարեփոխումներու իրականացման դիմադրելու դէպքերն ու վերջին աղմկահարուց զայթակողութիւնները:

Զեկոյցին մէջ կ'ըսուի, որ կան կառավարութեան կողմէ դատաւորներուն վրայ ազդելու փորձերու մասին չհաստատուած տեղեկութիւններ:

Ըստ զեկոյցին, Հայաստանի մէջ քաղաքական բանտարկեալներու կամ կալանաւորներու առկայութեան մասին արժանահաւատ տեղեկութիւններ չկան:

Կառավարութիւնը ընդհանուր հաշիւով կը յարգէ խօսքի ազատութեան իրաւունքը, թէեւ կան որոշակի սահմանափակումներ: Զեկոյցին մէջ կը նշուի, որ իշխանութիւնը չէ ներառած «ճանր վիրաւորանքը» մինչեւ Յուլիս 1 ուժի մէջ մտած Քրէական օրէնսգիրքին մէջ, եւ այդ տուած է այդ յօդուածը ապաքրէականացնելու հնարաւորութիւն:

Հրաչեայ Սարգսեանը Հրաժարական Տուալ Երեւանի Քաղաքապետի Պաշտօնէն

Երեւանի քաղաքապետարանին մէջ գործակարգավարական արտահերթ խորհրդակցութեան ժամանակ քաղաքապետ Հրաչեայ Սարգսեանը հրաժարական տուաւ պաշտօնէն: Յիշեցնենք, որ աւագանին գալիս քաղաքապետ ընտրած էր 2021 թուականի Դեկտեմբերին:

«Ես ուզում եմ յայտնել իմ հրաժարականի մասին՝ միաժամանակ յայտնելով, որ շարունակելու դժ լինել քաղաքական թիմի հետ... նախկինում բոլորիդ յայտնի էր, որ Քաղաքացիական Պայմանագիր կուսակցութեան Երեւանի քաղաքապետի թեկնածուն Տիգրան Աւինեանն էր: Եւ ցուցակը գլխաւորելու է Տիգրան Աւինեանը: Յոյս ունեմ, որ Քաղաքացիական Պայմանագիր



Երեւանի նախկին քաղաքապետ Հրաչեայ Սարգսեան

կուսակցութիւնը կը ստանայ Երեւանի վստահութեան քուէն», յաւելեց ան:

9-ի, 2021թ. Յունուարի 11-ի, 2022թ. Հոկտեմբերի 31-ի եռակողմ եւ 2022թ. Հոկտեմբերի 6-ի քառակողմ յայտարարութիւններին հիման վրայ»:

Հայաստանի Արտաքին Գործոց նախարարութիւնը մասնաւորապէս կը նշէ, որ 44-օրեայ պատե-

րագմի հետեւանքով հայաթափուած շրջաններուն մէջ Ատրպէյճան անթաքուց կերպով կ'իրականացնէ վերաբնակեցման ծրագրեր՝ փորձելով վերացնել հայկական հետքը Լեռնային Ղարաբաղի՝ իր վերահսկողութեան տակ անցած տարածքներէն:

ԱԳՆ-Ը Կ'աշխատի Ատրպեյճանի Կողմէ Լահեյի Դատարանին Որոշումը Զկատարելու Հարցը ՄԱԿ-Ի ԱՆ-ԻՆ Մէջ Բարձրացնելու Ուղղութեամբ

Լազինի միջանցքը արգելափակելու վերաբերեալ Արդարադատութեան Միջազգային Դատարանին որոշումը Ատրպեյճանի կողմէ չկատարելու հարցը ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդին մէջ բարձրացնելու առնուազն 2 տրամաբանութիւն կայ, եւ Հայաստանի Արտաքին Գործերու նախարարութիւնը կ'աշխատի այդ ուղղութեամբ: Այս մասին յայտնեց Միջազգային իրաւական հարցերով ՀՀ ներկայացուցիչ Եղիշէ Կիրակոսեանը ԱԺ Պետարաւական Հարցերու Մշտական Յանձնաժողովի նիստին՝ անդրադառնալով «Հայաստան» խմբակցութեան քարտուղար Արծուիկ Մինասեանի հարցին:

«Հայաստան» խմբակցութեան քարտուղար Արծուիկ Մինասեանը հետաքրքրուեցաւ, թէ արդեօք հնարաւոր կը համարէ՞, որ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդը, դիտարկելով Լահէյի դատարանին որոշումը, որպէս պարտադիր կատարման ենթակայ վճիռ, կիրառէ ՄԱԿ կանոնադրութեան 7-րդ գլուխով սահմանուած պատժամիջոցները, հարկադրանքի միջոցները կամ առնուազն սկսի այդ ուղղութեամբ քայլերու ձեռնարկել, եւ, թէ արդեօք Հայաստանը այդ ուղղութեամբ քայլերու կը ձեռնարկէ՞:

Կիրակոսեանը վերահաստատեց, որ Լազինի միջանցքի ապաշրջափակման վերաբերեալ Արդարադատութեան Միջազգային Դատարանի որոշումը իրաւաբանօրէն պարտադիր ուժ ունի՝ համաձայն ՄԱԿ-ի եւ դատարանի կանոնադրութեան. այն Ատրպեյճանի կողմէ ենթակա է պարտադիր կատարման: «Մենք, ցաւօք, առերեսուած ենք իրականութեան հետ, որ Ատրպեյճանն առհասարակ անտեսում է որոշումը, ոչ միայն անտեսում է, այլ ամենաբարձր պաշտօնական մակարդակից մինչեւ ցած պաշտօնական մակարդակներում փորձում է նաեւ աղակալել որոշման բովանդակութիւնը: Դա նաեւ վերջերս արտայայտուել էր Ատրպեյճանի արտաքին գործերի նախարարի նամակում, որն ուղղուած է ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղարին, որին, ի



Միջազգային իրաւական հարցերով ՀՀ ներկայացուցիչ Եղիշէ Կիրակոսեան

պատասխան, նամակ ներկայացուել է նաեւ մեր նախարարի կողմից», ըսաւ Կիրակոսեան:

Ան ընդգծեց, որ ՄԱԿ-ի կանոնադրութեան 94-րդ յօդուածը որոշակի նեղ ձեւակերպում կու տայ, կը վերաբերի վճիռներուն: Բայց յօդուածի կիրառման հոլովոյթը քիչ մը աւելի լայն է: Եւ եղած են փորձեր՝ դատարանի միջանկեալ որոշումները կամ ժամանակաւոր միջոց կիրառելու որոշումները ներկայացնել Անվտանգութեան Խորհուրդ: Ցաւօք, այդ դէպքերը շատ յաճոյքով կ'են պատկուած: Դէպքերը վերաբերած են մշտական անդամին: Եւ մշտական անդամը, որպէս կանոն, կիրառուած է վեթոյի իրաւասութիւնը:

«Սակայն մեր պարագայում, կարծում եմ, անհրաժեշտ է այդ ուղղութեամբ աշխատել: Ես գիտեմ, որ ԱԳ նախարարութեան գործընկերներն արդէն աշխատում են այդ ուղղութեամբ: Շատ կարեւոր է, որ Անվտանգութեան Խորհուրդում հարցը բերուի օրակարգ: Եւ պէտք է հնարակողին օգտագործելով բոլոր դիւանադիտական խողովակները՝ այդ ուղղութեամբ աշխատանք տարուի հարցի բարենպաստ քննարկում ապահովելու համար», ըսաւ Միջազգային իրաւական հարցերով ՀՀ ներկայացուցիչը:

2022-ԻՆ Հայաստան Տեղափոխուած Է Մօտ 110 Հազար Ռու Քաղաքացի. Քերոբեան

Անցեալ տարի Հայաստան տեղափոխուած է մօտ 110 հազար Ռուսիոյ քաղաքացի, «Վեստոմոսթի» թերթին տուած հարցազրոյցին ըսած է ՀՀ տնտեսութեան նախարար Վահան Քերոբեանը:

«2022 թուականի համար գուտ վերատեղաւորումը կը կազմէ մօտաւորապէս 108-110 հազար քաղաքացի, այսինքն՝ այդքան ռուսեր եկած են Հայաստան եւ մնացած են մշտական բնակութեան», թերթին ըսած է ան:

Հայաստանի Տնտեսութեան նախարարութեան ղեկավարը տեղեկացուեցած է նաեւ, որ անցեալ տարի բացուած է մօտ 2,5 հազար իրաւաբանական անձ ռուս մասնակիցներով, եւս 4 հազար առեւտրային ընկերութիւն արձանագրած են անհատ

ձեռնարկատէրերը: Տարեկան միջինը 500 առեւտրային ընկերութիւն կը բանան ռուսերը, նշած է ան՝ յաւելելով, որ ընկերութիւնները տարբեր մեծութեան են՝ մէկ մասը ունի 600-700 աշխատող, միւսները՝ մէկ մարդ:

«Ռուսերու հոսքի եւ ռուսական առեւտրային ընկերութեան Հայաստան տեղափոխման շնորհիւ մենք սկսանք շատ բարձր աճի կշիռները ցոյց տալ», մանրամասնած է Քերոբեան՝ նշելով նաեւ ՀՆԱ-ի աճը:

Յունուարին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը ըսած էր, որ 2022 թուականին Ռուսիայէն մարդոց տեղափոխումը դրականօրէն ազդած է Հայաստանի տնտեսութեան վրայ, որուն հետեւանքով ՀՆԱ-ի ծրագրաւորուած աճը գրեթէ կրկնապատկուած է:

Թաթուլ Յակոբեան Ներկայացուց Իրավիճակը՝ Հայաստանի Եւ Արցախի Մէջ



Թաթուլ Յակոբեան ելոյթ կ'ունենայ ՄԴՀԿ քաղաքական դիւանի կազմակերպած միջոցառումին

Այս օրերուն Միացեալ Նահանգներ կը գտնուի հայրենի ծանօթ մտաւորական եւ վերլուծաբան, լրագրող, հայկական ուսումնասիրութիւններու Անի կեդրոնի համակարգող Թաթուլ Յակոբեան: Ան ԱՄՆ-ի շաբթու քաղաքներու հայ հասարակութեան հետ հանդիպումներ եւ քննարկումներ պիտի ունենայ:

Այդ ծիրէն ներս, Մարտի 15-ին, 2023, հանդիպում մը տեղի ունեցաւ Փաստինայի Հ.Կ.Բ.Մ.ի կեդրոնին մէջ, կազմակերպութեամբ ՄԴՀԿ քաղաքական դիւանին: Ընտրանի բազմուեան մէջ կը գտնուէին Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութեան եւ շրջանի ղեկավարութեան ու ենթակառուցներու ներկայացուցիչներ:

Օրուան հանդիսավար իրաւաբան Գրիգոր Մոլոյցեան իր բացման խօսքին մէջ, ողջունելէ ետք ներկայացուց հիւր գեկուցաբեր յայտնի լրագրող Թաթուլ Յակոբեանը:

Հայրենի հիւրը՝ իր ելոյթին մէջ, նախ համարօտ ակնարկ մը նետեց Հայաստանի եւ Արցախի վերջին տասնամեակներու տիրող իրավիճակին եւ արցախեան 44 օրուան պատերազմին տուն տուող պատճառներուն եւ հետեւանքներուն: Ան առանձնապէս պախարակեց նա-

խորդ իշխանութիւններու որդեգրած սխալ ռազմավարութիւնները, յատկապէս Ռ. Քոչարեանի օրով եւ անկէ ետք ալ Հայկական բանժակին վարած անփոյթ մարտավարութիւնները, պատճառ դառնալով Ատրպեյճանի նախարարականներուն եւ հազարաւոր զոհերուն: Ան վերապահութիւն յայտնեց Արցախի եւ Հայաստանի բանակցութիւններուն միաժամանակ նշելով ներքին հակասութիւնները: Եզրակացութեան մէջ կարեւորեց հայկական բանակի վերադիմումը եւ զայն արդիական սարքաւորումներով օժտելու հրամայականը:

Սույն շահեկան ասուլիսի աւարտին՝ օրուան գեկուցաբերը պատասխանեց ներկաներուն կողմէ եղած հարցումներուն, որոնք բնականաբար, առնչութիւն ունէին Հայաստանի եւ Արցախի ներկայ պայթեումային իրավիճակին եւ մօտաւոր ապագայի կանխագուշակութիւններուն հետ:

Աւարտին՝ տեղի ունեցած հիւրասիրութեան ընթացքին ներկաները մօտէն ծանօթացան Թաթուլ Յակոբեանին եւ զրուցեցին հայրենիքը, Արցախն ու սփիւռքը յուզող հարցերու մասին: Այս առթիւ ներկաները կրցան ունենալ Թաթուլ Յակոբեանի եւ Անի կեդրոնի հրատարակութիւններէն օրինակներ:

Արեւմուտքը Կը Փորձէ Գժտեցնել

Շարունակուած էջ 1-էն

րու նախարար Արարատ Միրզոյեանը: «Դրա ապացոյցն այն է, որ տասնեակ հազարաւոր ռուսաստանցիներ ազատ, խաղող ու բաւական յարմարաւէտ ապրում են Հայաստանի տարածքում, զբաղւում են իրենց աշխատանքով ու առեւտուրով, եւ ոչ մի բողոք չի ստացուել: Հայաստանի Սահմանադրութիւնն ու օրէնսդրութիւնը երաշխաւորում են հաւաքների անցկացման ազատութիւնը: Եւ դա վաղուց նորութիւն չէ: Հայաստանում, Երեւանում շատ յաճախ տեղի են ունենում բողոքներ նաեւ Հայաստանի իշխանութիւնների դէմ», ըսաւ Միրզոյեանը:

ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան անդրադարձաւ Հայաստանի մէջ ԵՄ դիտորդական առաքելութեան տեղակայման մասին հարցին: Ան միաժամանակ յայտնեց, որ Հայաստանը չէ մերժած ՀԱՊԿ դիտորդներու տեղակայման առաջարկը:

«Հայաստանի ու Եւրոպայի յարաբերութիւնները կառուցողա-

կան են: Ինչ վերաբերում է ԵՄ դիտորդական առաքելութեանը, ապա այդ առաքելութեան մասնաթիւ շատ յստակ է, տեղեկութիւնը հրապարակային է՝ դա քաղաքացիական դիտորդական առաքելութիւն է: Կրկնում եմ, առաքելութիւնը կրում է բացառապէս քաղաքացիական բնոյթ», ըսաւ Միրզոյեան:

Անդրադառնալով հարցին, թէ ինչո՞ւ Հայաստանը մերժեց ՀԱՊԿ դիտորդները՝ Արարատ Միրզոյեան պատասխանեց, որ հարցումը ճիշդ չէ, քանի որ Հայաստանը երբեք չէ հրաժարած այդպիսի առաքելութեան: «Աւելին, այդ որոշման նախադիւրս սեղանին է, դրա շուրջ աշխատանքը շարունակուած է: Այստեղ առանցքային է այն, որ մեր ընկալմամբ ու զգացողութեամբ ՀԱՊԿ-ն ինքը յստակ չի ճանաչել ՀԱՊԿ պատասխանատուութեան գօտին: Մեր տեսակետից դա մի փոքր խնդրահարց է, բայց կրկնում եմ՝ որոշման նախագիծը սեղանին է, աշխատանքները շարունակուած են», յաւելեց Միրզոյեան:

Ո՞վ Պիտի Յաղթ Թուրքիոյ Յառաջիկայ Ընտրութիւններուն



ՃՐՏԳ. ԳԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՂՊԱՇԵԱՆ

Երկարատեւ ժողովներէ եւ աշխատանքներէ ետք թրքական ընդդիմադիր կուսակցութիւնները (Թիւռփ վեց եւս, Քեմալ Քըլլըզ-դարօղլուի գլխաւորած ժողովրդա-չանրապետական կուսակցութիւնը, ապա՝ Մերալ Աքչնարի 2017 թ. հիմնադրած «Լաւ» կուսակցութիւնը, երրորդը՝ նախկին վարչապետ Ահմէթ Տավութօղլուի 2019 թ. հիմնադրած «Ապագայ» կուսակցութիւնը, ապա Ալի Քաբաջանի 2020 թ. հիմնած «Ժողովրդավարութիւն եւ վերածնունդ» կուսակցութիւնը, Թեմէլ Քարամուլլա օղլուի «Երջանկութիւն» եւ Գիւլթէքին Ուլսալի Դեմոկրատական կուսակցութիւնները), յաջողեցան Քեմալ Քըլլըզ-դարօղլուն իբր իրենց թեկնածուն ընտրել 2023 թ. Մայիսին նշանակուած ընտրութիւններուն նախագահ Ռեշիթ Թայիպ էրտողանի հետ մրցակցելու:

Քեմալ Քըլլըզդարօղլուի գլխաւորած աշխարհիկ ժողովրդա-չանրապետական կուսակցութիւնը ամենամեծը եւ ամենահինն է, Քեմալ Աթաթուրքը հիմնած էր ան 1923 թ.:

Ներկայիս Քըլլըզդարօղլուն կը վայելէ ընդդիմադիր կուսակցութիւններու աջակցութիւնը, որովհետեւ ան կը բխի անոնց շահերէն. Քըլլըզդարօղլուի յաղթանակի առիթը ընտրութիւններուն նոյնքան մեծ է, որքան էրտողանինը եւ աւելին. Ըստ Aksoy Research-ի կողմէ հրատարակուած Մարտ 8, 2023-ին կատարուած սոցիալաբանումներու (poll) արդիւնքներուն Քըլլըզդարօղլուն 55,6%-ով առաջատար է էրտողանի 44,4%-ի նկատմամբ: Իսկ Alf Research-ը ցոյց կու տայ 55,1% Քըլլըզդարօղլուին եւ 44,9% էրտողանին. Ուրիշ հետազոտական կեդրոն մը եւս (Piar Research) մօտաւորապէս նոյն թիւերը ունի: Ընդդիմադիր քիւրտամէտ ժողովուրդներու Դեմոկրատական կու-

սակցութիւնը կը ներկայացնէ 10-11% եւ անոնք էրտողանին դէմ են. Քըլլըզդարօղլուին կուսակցութիւնը համակրելի է 31,8%, մինչդեռ էրտողանին 31%: Այստեղ նկատի կ'առնուի որ իրար շատ մօտ են եւ երրորդ կողմն է որ յաղթանակը պիտի որոշէ:

Վեր. Եսայի Սարմազեանի Յիշատակին «Նախ Ձեր Սիրտերը Նետեցէք...»

Վեր. Եսայի Սարմազեանն էր: Կեանք մը որ ապրեցանք եւ մեծցանք միասին՝ բայց ան նաեւ մեզ մեծցուց: Այս կեանքի պատմութիւնը կը սկսի Պէյրութ՝ Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն Վարժարանի մէջ երբ միջնակարգի աշակերտ էի, 1970 տարիներուն:



Երիտասարդ, կորովի եւ կեանքով լեցուն Պատուելին մեր պատանեկան տարիքէն դէպի երիտասարդութեան օրերը պիտի ուղեկցէր մեզի, առաջնորդէր եւ մեր «անհանդարտութիւններուն» պիտի համբերէր...: Բայց նոյնքան նաեւ էշըճֆիէի Զանից երիտասարդաց ընկերակցութեան մէջ, երբ ան նշանակուած էր հոգեւոր առաջնորդ:

Պատուելին մեզի հետ էր: Դպրոցական դասապահներուն, պաշտամունքներուն, Զանից հաւաքներուն ու տակաւին պասքէթպոլի մեր մրցումներուն: Ան միշտ ներկայ էր եւ իր կորովը կը բաժնէր մեզի հետ եւ կը քաջալերէր մեր մրցումներուն ընթացքին: «Նախ ձեր սիրտը նետեցէք եւ ետքը գնդակը՝ եւ տեսէք, թէ որքան կոլեր պիտի նշանակէք»:

Պատուելի Եսայիէն սորվեցանք թէ ինչպէս մեր «սիրտերը» պիտի նետենք: Եթէ մէկ կողմէ պասքէթպոլի կողովին բայց շատ աւելի՝ կեանքին:

Եւ տարիներու հետ Պատուելին հետ միասին գալեցիք: Եկեղեցական, կրթական, միութեանական, համայնքային, հրատարակչական ու շատ մը այլ միջոցառումներու մէջ: Սորվեցուց մեզի եւ առանց յոգնելու՝ թէ ինչ կրնայ նշանակել, ծառայել Քրիստոսի եւ Եկեղեցիին ու հայ ժողովուրդին: Հպարտ Քէսապցիին էր որուն կեանքը հոգեւորին եւ ազգայինին միացուցումն էր՝ ուր ան կը տքնէր հայ երիտասարդին հոգեւոր եւ ազգային դաստիարակութեան համար: Սերունդ եւ առաջնորդ պատրաստելու իր ջանքը յստակ էր եւ ան երբեք չի դադարեցաւ, «չանքի մէջ թուլասիրտ չ'ըլլալու» իր կոչումին մէջ:

Աշխատեցանք եւ գործակցեցանք միասին: Եթէ ես էշըճֆիէի հայ աւետարանական եկեղեցիին մէջ ու ան Ամանոս: Այդ միայն աշխարհագրական դրուածք էր: Կար կոչումը, նուիրումը եւ ծառայութեան գրաւականը որ վեր էր ամէն տուեալներէ:

Պատուելին եղաւ նաեւ Լիբանանի հայ աւետարանական համայնքի համայնքապետ եւ այդ պատերազմի շատ դժուար օրերուն մէջ: Իր ամուր նկարագրով, ան յոյս եւ համբերութիւն բաժնեց չորս դին:

Եկաւ օրը երբ Պատուելին ստացաւ հրակէր՝ ծառայելու համար Թորոնթոյի հայ աւետարանական եկեղեցիին մէջ: Մեկնեցաւ միջին արեւելքէն բայց սիրտը

մնաց հոս...: Վերջապէս, իր ակունքներն են, չէ՞: Ու տակաւին իր հօտը, շրջանակը ու բոլոր անոնք որոնք իր հետ մեծցան եւ ինք մեծցուց զանոնք:

Կը հեռաձայնէր Գանատային եւ իր ուրախութիւնը եւ հպարտութիւնը կը յայտնէր իմ հրապարակագրական գործունէութեանը համար: Հեռաձայններուն մէջէն կար միշտ քաջալերանքը: «Հրայր, շարունակէ գրել»:

«Լեռները իրար չեն հանդիպիր բայց մարդիկ՝ այո»: Միջին արեւելեան այս խօսքը շատ դիպուկ է: Հանդիպեցանք եւ բաւական յաճախ: Հայաստան, Գանատա, Լիբանան ու տակաւին: Ան մնաց մեր Պատուելին, որ չէր մոռնար մեր անհանդարտութիւնները: «Ախ դուք, ախ...»:

Բայց այդ «ախերուն» մէջ ինչքան սէր կար ու տակաւին հպարտութիւն: Կը տեսնէր այն հոնտերը որ ցանաժ էր եւ անոնք ծիլ կուտային եւ սուսած են: Եւ մենք չէինք մոռնար միշտ զինք կանչելով, «Պատուելի...»:

Յունուար 2023 ին Փասատինայի մէջ հանդիպեցայ Զապէլ Բրուտեանին եւ հարցուցի Պատուելին մասին: «Առողջութիւնը շատ քաջալերական չէ», ըսաւ Զապէլ:

Բարեւներս զրկեցի: Բայց չէի գիտեր թէ այդ վերջինն էր եղեր:

Բայց կայ տակաւին՝ «սիրտը»:


«Նախ ձեր սիրտերը նետեցէք եւ ետքը գնդակը՝ եւ տեսէք, թէ որքան կոլեր պիտի նշանակէք»:

Սիրելի Պատուելի, Դուն սորվեցուց մեզի թէ կեանքի մէջ ուր պիտի նետենք մեր սիրտերը: Սորվեցուցիր մեզի թէ Քրիստոսի, Եկեղեցիին եւ հայ ժողովուրդին կողովներուն համար պէտք է նետենք մեր սիրտերը, որպէսզի «կէտե» շահինք: Շահինք «կեանքը» եւ նաեւ օգնենք որպէսզի հաւաքականութիւններ շահին նոյնը:

Վարձագր կատար, Պատուելի: Ընկերակցեցար մեզի հետ եւ նոյնքան առաջնորդեցիր մեր կեանքերը, որպէսզի տեսնենք թէ ո՞ւր

Նոր Հրատարակութիւն - «Գիրք Հարցմանց»

Արարատ Գիտութեանց Միջազգային Ակադեմիան ուրախութիւնը ունի ծանուցանելու որ 2023-ի սկիզբը՝ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց տպարանէն լոյս տեսաւ 14-րդ դարուն ապրած Ս. Գրիգոր Տաթեւացիի նշանաւոր «Գիրք Հարցմանց»ը, դասական ուղղադրութեամբ արդի արեւելահայերէնի թարգմանուած Սուսանա Գրիգորեանի կողմէ, իբր հրատարակութիւն Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Հ. Աճառեանի Անուան Լեզուի Ինստիտուտի: Երեք տարի առաջ ան արդէն տպուած էր Երեւանի մէջ՝ Տիգրան Մեծ Հրատարակչութեան կողմէ:



Նշանաւոր Տաթեւի Համալսարանի ուսուցչապետ ու «Երկրորդ Լուսաւորիչ» կոչուած հայ եկեղեցուց եռամեծար վարդապետին աւելի քան հազար էջոց սոյն գրաբար աշխատասիրութիւնը առաջին անգամ տպուեցաւ Կ. Պոլսոյ մէջ 1729-ին. բայց անկէ կը պակասէր «Ընդդէմ Տաճկաց» գլուխը՝ յայտնի պատճառներով: Լուսատիպ վերահրատարակութիւն մը տեղի ունեցաւ 1993-ին՝ Երուսաղէմ: Իսկ այս տարի նոյն քաղաքին մէջ լոյս ընծայուեցաւ անոր արեւելահայերէն աշխարհաբար թարգմանութիւնը՝ դասական ուղղադրութեամբ:

17 տարիներու ընթացքին կատարուած սոյն կոթողական աշխատանքին նպատակն էր քննութեան ենթարկել դաւանաբանական վէճերը եւ պաշտպանել հայ եկեղեցուց

դիրքորոշումը: Գլխաւոր 40 հարցադրումներ արծարծուած են 10 բաժիններու մէջ, ուր տեղ գտած են՝ ի միջի այլոց՝ առարկութիւններ այլազգիներու դէմ, բացատրութիւններ՝ արարչագործութեան վեց օրերուն եւ մարդու կազմաւորման, եւ ուսումնասիրութիւններ Քրիստոսի մարդեղութեան, աշխարհի վախճանին, յարութեան ու հատուցման դատաստանին մասին:

Որպէս հարցումներու պատասխան ներկայացուած Աստուածաշունչի այս լայնածաւալ մեկնութիւնը, խմբագիր Յակոբ Քէսեանի բազմաճարիւր ծանօթագրութիւններով ճոխացած, յանձնարարելի է թէ՛ կղերականներուն, թէ՛ աշխարհականներուն, եւ հնարաւոր է ձեռք ձգել Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանէն:

պիտի նետենք մեր սիրտերը...: Եթէ տխուր ենք որ ֆիզիքապէս մեկնեցար՝ բայց բազմազգիներ որ աւելի լաւ Տեղ մը գացիր: Այն Տեղը՝ որուն համար անդադար քարոզեցիր եւ ապրեցար... Անոր համար: Պատուելի, արտօնէ ինձի որ

ես ալ ըսեմ քեզի: «Բարի պատերազմը պատերազմեցար, ընթացքը կատարեցիր եւ հաւաստքը պահեցիր»: Յաւակցօրէն: Եւ անպայմանօրէն՝ երախտագիտական զգացումներով: ԴՈՎՏ. ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԱՆ

ՇԻՒԽԻՄԻՆ ԿՐԻՒԿԼՅԻ ԿԵՒՄՏԵԼՆ ԹԻՒ

Հովանաւորութեամբ՝

ԹԻՌՈՒ ԲԱՒԵԸՆԻ ԱԿԱԶՈՒՄԻ

Վերջն. Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐ.Ք. ՏԵՐՏԵՐԵԱՆԻ

Կապիտալիտարութեամբ՝

«ԶՈՒԱՐԹՆՈՑ» Մշակութային Վարչութեան

Պատասխանատու էքսիկոյ՝

ՀԱՐԱՎՅԻՐԻՆ ԱՐՅԱԼԻ ԵԿԵՂԵՅԻՆԵՐՆ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Պատասխան՝

Արժն. Տ. ԳԵՈՐԳ ՔԻՆՅ ԱԲԵԱՆ

ԳԵՂԱՐՈՒԿԵՍԱԿԱ ՅԱՅՏԱԳԻՐ

Տեղի կ'ուսուցար

Հիւզարթի, Մարտ 30, 2023, երեկոյեան ժամը 7:00-ին
Առաջնորդարանի «ԱՐՄԷՆ ՀԱՄԱԿՐ» Սրահ
3325 North Glenoaks Blvd., Burbank, CA 91504

Հիւրասիրութիւն Մուտքը Ազատ

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին

Massis2@earthlink.net (626) 797-7680

Պատմութիւնը Կրկնուած Նախիջեւանի Յանձնումի Հարիւրամեակը (1923-2023)

ԴՈԿՏ. ԶԱԲԵՆ Ա ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Բանասէր Արգամ Այվազեան


Պատմութիւնը անգուժօրէն կը կրկնէ ինքզինք: Մինչդեռ բացի բանասէր Արգամ Այվազեանէն, բոլորիս ուշադրութիւնը Արցախի հանրապետութեան եւ 44-օրեայ Ատրպէյճանի շրջապագերծած կործանարար պատերազմին հետեւանքով ստեղծուած շատ բարդ եւ մտահոգիչ կացութեան վրայ կեդրոնացած է, նոյնիսկ Հայաստանի Հանրապետութեան գոյատեւման ի խնդիր, միւս կողմէն բոլորովին աչքաթող ըրած ենք Նախիջեւանը, որ հարիւր տարիներ առաջ նորակազմ Սովետական Միութեան անարդար եւ դատապարտելի գրիչի մէջ հարուածով բաժնուեցաւ Հայաստանի ինքնավար մասին ու կցուեցաւ Ատրպէյճանին: Հայկական երկու հողամասերն ալ արեւմտեան եւ արեւելեան Հայաստանի պատմական ու հարազատ մասերը կը կազմեն իրենց հայկական կրօնական եւ մշակութային հսկայ հարստութեամբ: Աչք ունեցողը կը տեսնէ, իսկ անխիղճն ու անուսը միայն կը ստէ: Վկայ՝ Նախիջեւանի անհամար խաչքարերն ու վանական հաստատութիւնները, թէկուզ մեծ մասամբ աւերակներու տակ:

Վկաներ են նաեւ այն հոգեւորականները որոնք 20-րդ դարէն առաջ ծնան Նախիջեւանի Ապրակունեաց Ներքին եւ Արտաքին Ազուլիսի գաւառներուն Գողթն եւ Յղնայ քաղաքներուն մէջ: Անոնք ուսանելի էտք ծննդավայրի Շահապունիք գաւառի Մեծոփի Ս. Աստուածածին եւ Ս. Կարապետ վանքերուն մէջ, Ս. Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ձեմարան մեկնած են Տ.Տ. Գէորգ Դ., Մակար Ա., եւ Մկրտիչ Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսներու օրով եւ ուսանած աստուածաբանութիւն եւ Հայ Եկեղեցոյ պատմութիւն: Անոնցմէ յայտնի բանասէրն է Յղնայ ծնած Կարապետ Եպիսկոպոս Տէր Մկրտչեան որ Մայր Աթոռի ձեռագիրներէն յայտնաբերեց «Կնիք Հաւատոյ» Հայ Եկեղեցոյ աստուածաբանութեան կարեւոր սկզբնաղբերը, սերտեց գայն եւ առաջին անգամն ըլլալով գայն հրատարակեց 1914 թուականին: Նման անկրկնելի աղբիւր մըն է նաեւ «Գիրք Թղթոց» նամակներու հաւաքածոն:

Մեր երախտիքը կ'երթայ այս պարագային բանասէր գիտնական Արգամ Այվազեանին որ վերակենդանացուց Նախիջեւանի աւերակները քանիցս իր գիտական այցելութիւններով Երեւանի Գիտութեան Ակադեմիային անունով: Որպէս արդիւնք Այվազեանի հետեւեալ կարեւոր գիրքերը հրատարակուեցան Ակադեմիային կողմէ:

- «Նախիջեւանի պատմական-ճարտարապետական յուշարձանները» (1981)
- «Լիակատար ցուցակ Նախիջեւանի յուշարձաններու» (1986)
- «Նախիջեւանի յուշարձաններն ու քանդակները» (1967)
- «Ձուղա եւ Ազուլիս» (1984)

Իսլամական Տեղաշարժ Հայաստանի Առաջին Հան-




րապետութեան 1918 մայիս 28 թուականէն շաբաթ մը ետք, Պատմի մէջ դաշինք մը կնքուեցաւ Օսմանեան կայսրութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ որու հետեւանքով թուրքերու մուտքը Նախիջեւան արտօնելի դարձաւ: Իսլամներու ծրագիրը ծայր տուաւ եւ Գողթն գաւառը գրաւուեցաւ որ միացման օղակ մը կը կազմէր թուրքիոյ եւ Ատրպէյճանի համար: Հայ Ազգային Խորհուրդը, որ տակաւին թիֆլիս կը մնար Երեւան փոխադրուելու նախօրէին, տեսնելով վտանգը խորհրդակցեցաւ թուրքիոյ հետ անակնկալ եւ խորամանկ այդ զարգացումին համար, գուշակելով թուրք-ազգերի միացեալ ներխուժում մը դէպի Նախիջեւան: Սոյն իսլամական տեղաշարժը ընդլայնուելով, Հայաստանի երեք մարզերը՝ Նախիջեւան, Ջանգեղուր եւ Ղարաբաղ գրաւման ենթակայ եղան, իբրեւ թէ որպէս երթուղի դէպի Հայաստան, եւ սակայն այդ հաշիւը կարելի չէր իրականացնել վերահաս Սովետական Միութեան Լեւինի բռնի ուժին տակ: Այսուհանդերձ Սովետական Միութիւնը դատապարտելի է Ստալինի օրով գոյգ երկրամասերը բերտ կերպով յանձնելու դրացի Ատրպէյճանի գրեթէ միաժամանակ: Սա ի՞նչ տեսակ Պատմի դաշնագիր էր եւ ո՛ւր էր հայոց դիւանագիտութիւնը. երկուքն ալ դատարկ:

Ազուլիս եւ Օրտուպատ Վտանգուած

1918-ի յուլիս 25-ին թուրքերը յարձակում գործեցին Ազուլիսի վրայ որ ուսման կարեւոր կեդրոն մըն էր Նախիջեւանի մէջ, եւ երկու շաբաթ ետք Կովկասեան իսլամ կառավարութիւնը Խալիլ Պէյը նշանակեց Օրտուպատի գինեալ ուժերու կցորդ «գորավարներով եւ ծանր զինամթերքով եւ մօտ 1000 տեղացի թաթար գիտնորներով»: Խալիլի գորաբանակը կը յարձակէր Ազուլիսի վրայ 1918 դեկտեմբեր 18-ին, եւ երկու տարի ետք 1920 յուլիս 28-ին Սովետական ուժերը հիւսիսէն հարաւ կ'իջիին ու կ'անջատէին Նախիջեւանը Հայաստանի ինքնավարութենէն:

Ուրեմն 1923 թուին կը հաստատուէր Նախիջեւանի ինքնավար մարզը եւ աւելին, փետրուար 9-ին կը կցուէր Ատրպէյճանի հանրապետութեան: Մինչեւ 1925 հայեր Նա-



Արգամ Այվազեան Ձուղա 1971

խիջեւանի 35,000 ընդհանուր բնակչութեան 50 տոկոսը կը կազմէին, իսկ աւելի ուշ 1976-ին կը կազմէին երկրորդ մեծամասնութիւնը ազգերինեղէն ետք եւ ուուսերու միջեւ:

Եկեղեցիներ եւ Յուշարձաններ


Նախիջեւանի հնագոյն եկեղեցույ տեղ 19-րդ դարէն սկսեալ հայեր Ս. Գէորգ եկեղեցին կառուցած էին: 1925 թուին Սովետական իշխանութեան հայեացքին տակ ազգերին արդէն սկսեր էին կործանել Նախիջեւանի հայոց խաչքարերն ու եկեղեցիները պատճառ դառնալով հետզհետէ հայաթափման յետագայ տասնամեակներուն: Հայեր մնացեր էին անպաշտպան նոյնիսկ իրենց հարազատ Սովետական Հայաստանի ՀՍՍՌ պետութենէն որ պիտի կատարէր իշխողներու կամքը քան թէ դարմանելու հարազատ հայերու վիճակը, որուն համար հայեր իրաւամբ


ընդվզած էին: Հոս արդէն ներքին դաւադրութիւն մը կը մատնէր ինքզինք թուրքերու եւ ուուսերու գործակցութեամբ: Հայեր անպաշտպան կը մնային, երբ արդէն դաւադրաբար Սովետական Միութիւնը Նախիջեւանը կը յանձնէր Ատրպէյճանին: Անոնց հոգը չէր թէ հայեր իրենց հայրենի հողերէն դուրս ո՛ւր եւ ի՞նչպէս կ'ապրէին:

Յաջորդող Պատահարներ

Երկու մարզերէն ներս շարունակուեցան աւերներն ու քանդումները մինչեւ իսկ Սովետական Միութեան վերջին նախագահ Կորպաչովի աչքին առջեւ: Հնախոյզ գիտնական Արգամ Այվազեանի անձնական քննութիւնները կ'ապացուցանեն ամէն ինչ երբ աչքի առջեւ ունենանք վերոյիշեալ իր յայտնի գործերը: 1975-ին ազգերիները քանդեցին հայոց հնագոյն

Շար.ը էջ 15






Գիրքի Շնորհանդէս Եւ Մակագրութիւն Անսրլեան Գերդաստանի Պատմութեան

**Հովանաւորութեամբ՝
Թեմիս Բարեջան Առաջնորդ
Գերշն. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի
Մասնակցութեամբ՝
Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան
Արեւմտեան Թեմի
«Զուարթնոց» Մշակութային Յանձնախումբի
«Նոր Վերնատուն» Ընկերային Եւ Մշակութային Միութեան**

**Գիրքը կը ներկայացնէ՝
Կարինէ Տէր Գեորգեան**

Տեղի կ'ունենայ՝
**Հինգշաբթի, 20 Ապրիլ 2023
երեկոյան ժամը 7:00ին**
Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարի,
Արմէն Եւ Կլորիա Համբար սրահէն ներս:
3325 N Glenoaks Blvd. Burbank, CA 91504

Գիրքէն օրինակ մը պիտի նուիրուի ներկաներուն
Հիրասիրութիւն --- Մուտքը ազատ



Քանոնահարուհի Մարիաննա Գեորգեանը Հնդկաստանում Հնչեցրել է Հայ Հեղինակների Գործերն Ու Խօսել Հայաստանի Մասին



«Տաղարան» հնագույն երաժշտութեան անսամբլի երաժիշտ եւ մի շարք միջազգային մրցանակների դափնեկիր, քանոնահարուհի Մարիաննա Գեորգեանը օրերս մենահամերգով է հանդէս եկել Հնդկաստանի Տրիվանդրում քաղաքում՝ հնդիկ երաժիշտների նուագակցութեամբ՝ ներկայացնելով Սայթ-Նովայի, Խաչատուր Աւետիսեանի, այլ կոմպոզիտորների ստեղծագործութիւններ ու մշակումներ:

Համերգային երեկոն տեղի է ունեցել Kerala Arts and Crafts Village-ի կազմակերպուած WOW (World of Women) կանանց տօնին նուիրուած շաբաթուայ շրջանակում:

կերս, սփռել: Բոլորն էլ բարձրակարգ ու տաղանդաւոր երաժիշտներ էին: Ինձ հաճելի էր համագործակցել նրանց հետ: Չհասկանալով միմեանց լեզուն՝ մենք խօսեցինք հոգու եւ երաժշտութեան տիեզերական լեզուով», - պատմում է քանոնահարուհին:

Մարիաննայի խօսքով՝ բոլորի նպատակն էր երաժշտութիւնը հասցնել հանդիսատեսին եւ անմոռանալի էներգիա փոխանցել, ինչն իրենց յաջողուեց:

«Կարողացանք գերազանցել ինքներս մեզ», - նշում է քանոնահարուհին եւ յաւելում՝ մարդիկ շատ ջերմ ու հիւրընկալ են եղել, սիրել են իրեն եւ իր արուեստը, Հայաստանը: Անգամ փորձել են հաղորդակցուել հայերէնով:

Համերգի աւարտին միջոցառման կազմակերպիչները Մարիաննա Գեորգեանին երախտագիտութեան նամակ, շնորհակալագիր եւ մրցանակ են յանձնել՝ բարձրակարգ համերգի համար:

Քանոնը հետաքրքրել է ոչ միայն հնդիկներին, այլեւ անգլիացիներին: «Հիւրանոցում իմ հարեւաններն անվիացի ամուսիններ էին: Երբ ծանօթացանք, նրանց շատ հետաքրքրեց քանոն նուագարանը, նրանք անգամ համերգին ներկայ լինելու ցանկութիւն յայտնեցին, մինչդեռ տոմսերն արդէն սպառուած էին:

ցախեան 44-օրեայ պատերազմի մասին», - նշում է նա:

Քանոնահարուհին նաեւ պատմել է աշխարհահռչակ բազմաթիւ հայերի մասին, որոնք պարբերաբար փայլում են տարբեր հարթակներում եւ ընդգծել, որ թէ՛ ինքը, թէ՛ հայ ազգը հպարտանում է իր տաղանդներով:

Մարիաննային ոչ միայն գրաւել է հնդկական կողմի՝ իրեն աջակցելու, ամեն բան փայլուն

ստեղծել է երկիրը, այդ դրախտավայրն իր համար է պահել», - ոգեւորութեամբ լիչում է Մարիաննան ու յաւելում՝ առաջիկայում տօն է սպասուում նաեւ հայաստանեան ունկնդրին:

Մարտի 28-ին Կոմիտասի անուան կամերային երաժշտութեան տանը կայանալու է համերգ, որտեղ քանոնահարուհին ներկայանալու է մէկ համարով. կը լինի հայաստանեան պրեմիերա: «Ինձ պատիւ է ընձեռուած



կազմակերպելու պատրաստակամութիւնը, այլեւ՝ երկրի մշակույթը:

«Այցելել եմ տեղի համալսարան, շփուել պրոֆեսորադասախօսական կազմի հետ, եղել եմ հնդիկ աստուածներից Շիւայի սրբավայրում: Հնդկաստանում կան վայրեր, ուր չի կարելի մուտք գործել, բայց, երբ ուղեկցող թիւը ներկայացնում էր ինձ, բացառութիւններ էին անում. մարդիկ շատ ոգեւորուած էին: Ծանոթացա հնդկական խոհանոցին, փորձեցի իրենց աւանդական զգեստները: Ես շատ սիրեցի Տրիվանդրումը, բնակիչներին եւ ամենակարեւորը՝ ովկիանոսն ու այրող աւազը: Ինչպէս իրենք են ասում՝ ես գտնուում էի Աստծոյ տանը: Ըստ սեղացիների՝ երբ Աստուած

կատարելու Տաճիկաստանից կոմպոզիտոր Տոլիբիտո Շախիդինի «Արժանգ կոմչերտո գրոստն», որը գրուած է քանոնի, ջութակի եւ կամերային նուագախմբի համար: Հեղինակն Արամ Խաչատրեանի ասն է եղել: Բեմում են լինելու Հայաստանի պետական կամերային նուագախումբը, որը ղեկավարելու է Մաքսիմ Նովիկովը՝ Ռուսաստանից, ջութակահար Կարէն Շահազադեանը», - տեղեկացնում է Մարիաննա Գեորգեանն ու շնորհակալութիւն յայտնում կամերային երաժշտութեան տան տնօրինութեանն ու իր վարպետին՝ Սեդրակ Երկանեանին թէ՛ Հնդկաստանում լինելու օրերին, թէ՛ առհասարակ իրեն աջակցելու համար:

Անժելա Համբարձումեան (Լուսանկարները տրամադրել է Մարիաննա Գեորգեանը) «ԱՐՄԵՆՊՐԵՍ»



«Արմենպրես»-ի թղթակցի հետ զրոյցում Մարիաննան ասում է՝ իւրաքանչիւր օրը նուիրուած է եղել որեւէ ոլորտի՝ ոսկերչութեանը, տարագին, պարարուեստին, գորգագործութեանը եւ այլն: Մարիաննա Գեորգեանը պատուաւոր հիւրի կարգավիճակով է մեկնել Հնդկաստան: Խոստովանում է՝ շատ հաճելի է եղել, որ երաժշտական մասը վստահել են իրեն:

«Մէկ ժամից աւելի տեւած համերգին ցանկանում էի, որ միայն հայկական երաժշտութիւն հնչի, սակայն, երբ այնտեղ էինք, կարծեցի, որ ճիշտ կը լինի՝ մէկ հնդկական գործ ներկայացուի, որն էլ բոլոր երաժիշտների նուագակցութեամբ կատարեց երգչուհի Ամուսա Ռաջան: Նուագակցում էին տաբլա նուագող Մահեշ Մանին, դաշնակահար Ռոհիթ Կրիշնան, Ջինշու վարման, որը տիրապետում էր եօթ նուագարանի՝ տարբեր ազգերի դարբուկ, կահոն, ասալատո, ունիստիք, չիմես, շա-

Ասացի՝ կը գաք եւ ինչպէս Հայաստանում է ընդունուած, կ'ասէք, որ Մարիաննա Գեորգեանի հիւրերն ենք եւ առաջին շարքում տեղեր ունէք: Այդպէս էլ արել էին: Ծատ ուրախացայ, երբ համերգի ընթացքում նկատեցի նրանց», - պատմում է քանոնահարուհին:

Մարիաննա Գեորգեանը մի շարք հարցազրոյցներ տալու հնարաւորութիւն է ունեցել եւ, օգտուելով առիթից, բարձրաձայնել է նաեւ Հայաստանին յուզող խնդիրները: Հարցազրոյցներն անվերջն են եղել, սակայն հայոց լեզուն հնչեցնելու, ինչպէս նաեւ առաւել լիարժէք ամէն բան պատմելու նպատակով, զրոյցներից մէկը մայրենիով է կազմակերպել: «Ասացի, որ պարզապէս երաժշտութիւն չեմ ներկայացնում, այլ Հայաստանի եւ իմ կեանքի պատմութիւնն եմ պատմում: Անդրադարձայ մեր ցաւերին՝ Հայոց ցեղասպանութեանը, պատերազմներին, յատուկ խօսեցի Ար-

St. Gregory Ladies Society
Presents

PARADE OF FASHION

Saturday April 1, 2023

Sheraton Universal Hotel
333 Universal Hollywood Dr.
Universal City, CA 91608

Boutique 10:30 AM
Luncheon & Fashion Show 12:00 PM

For More Information:
Aida Sethian | (626) 695-8013
Yn. Talin Petoyan | (626) 616-1535
stgregoryladiessociety@gmail.com

\$125 Donation

«Պարսելոնայի» Յաղթանակը «Ռեալի» Նկատմամբ



Սպանիոյ առաջնութեան 26-րդ հանգրուանին փոխախոյեան «Պարսելոնան» ընդունեց ախոյեան «Ռեալին» եւ յաղթանակի հասաւ 2:1 արդիւնքով:

Սպանացի Չաւիի գլխաւորած խումբի յաղթական կողմ յաւելեալ ժամանակին նշանակեց կիսապաշտպան Ֆրանք Գեսիեն, որուն կողային փոխանցում կատարեց սպանացի պաշտպան Ալեքս Պալոսեն:

«Պարսելոնան» 68 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը: «Ռեալը» երկրորդն է՝ 56 կէտ:

«Եուլվենտուս» Պարտութեան Մատնեց «Ինթերին»

Իտալիոյ առաջնութեան 27-րդ հանգրուանին փոխախոյեան «Ինթեր» Միլանի մէջ մրցեցաւ Թուրինի «Եուլվենթուսի» հետ եւ պարտութիւն կրեց 0:1 արդիւնքով:

Հենրիխ Մխիթարեանը «Ինթերի» պահեստայիններու կազմին մէջ էր եւ փոխարինման դուրս եկաւ 63-րդ վայրկեանին:

«Ինթեր» 50 կէտով նահանջեց երրորդ տեղ: Երկրորդը «Լացիոն» է՝ 52 կէտ: «Եուլվենթուսը» 7-րդն է՝ 41 կէտ: Առաջատար «Նապոլին» ունի 71 կէտ:

Միւնիխի «Պայրընը» Պարտուեցաւ, «Պորուսիան»՝ Նոր Առաջատար

Գերմանիոյ առաջնութեան 25-րդ հանգրուանին ախոյեան Միւնիխի «Պայրընը» Լեւերկուսենի մէջ հիւրընկալուեցաւ տեղւոյն «Պայերէն» եւ պարտութիւն կրեց 1:2 արդիւնքով:

«Պայրըն» նահանջեց երկրորդ տեղ՝ 52 կէտ: Առաջատարը Տորսմոնտի «Պորուսիան» է՝ 53 կէտ:

ՊՍԺ-ն Մեսիի Եւ Սփապի Զետ Պարտութիւն Կրեց

Ֆրանսայի առաջնութեան 28-րդ հանգրուանին ախոյեան ՊՍԺ-ն ընդունեց «Ռենին» եւ պարտութիւն կրեց 0:2 արդիւնքով: Ֆրանսացի ՊՍԺ-ի հիմնական կազմին մէջ էին չարձակողներ, ֆրանսացի Կիլիան Մփապեն ու արժենթինացի Լիոնել Մեսին, որոնք խաղցան ամբողջ հանդիպումը:

ՊՍԺ-ն 66 կէտով կը շարունակէ գլխաւորել մրցաշարային աղիւսակը եւ 9 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Լանսէն»:

ՊՍԺ-ն Պատրաստ Է 200 Միլիոն Եւրո Վճարել Երլինկ Զոլանտի Փոխադրման Զամար

Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-ն պատրաստ է 200 միլիոն եւրո վճարել Անգլիոյ ախոյեան «Մանչեսթըր Սիթիի» 22-ամեայ նորվեկիացի չարձակող էրլինկ Հոլանտի համար:

Փոխանցումը իրագործելու համար փարիզեան ակումբը չի երկարաձգեր պայմանագրերը արժենթինացի չարձակող Լիոնել Մեսիի եւ սպանացի պաշտպան Սերխիո Ռամոսի հետ, նաեւ կը վաճառէ պրագիլցի չարձակող Նեյմարին:

Ընթացիկ մրցաշրջանին էրլինկ Հոլանտը «Մանչեսթըր Սիթիի» հետ բոլոր մրցաշարերուն մասնակցած է 36 հանդիպման, նշանակելով 39 կոլ, ինչ որ ակումբային մրցանիշէ:

Transfermarkt-ը էրլինկ Հոլանտի փոխադրման արժէքը կը գնահատէ 170 միլիոն եւրո:



Թուրքիոյ Դէմ Խաղէն Առաջ Զայաստանի Զաւաքականը Սկսաւ Մարզական Զաւաքը



Ֆուլթպոլի Հայաստանի ազգային հաւաքականը սկսաւ մարզական հաւաքը ՀՖՖ Ֆուլթպոլի ակադեմիայի մէջ:

Արտերկրի մէջ հանդէս եկող ֆուլթպոլիստներն հաւաքականի ճամբարին մէջ են, կը հաղորդէ ՀՖՖ-ի կայքը:

Ֆուլթպոլի Հայաստանի ազգային հաւաքականի նորանշանակ ուղղանացի գլխաւոր մարզիչ Ալեքսանդր Պետրակովը փորձած է ազգային խումբ վերադարձնել իտալիոյ փոխախոյեան Միլանի «Ինթերի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանին, սակայն ան մերժած է: Այդ մասին մարզիչը յայտնած է Երեւանի մէջ ընթացող ասուլիսի ընթացքին:

«Հենրիխ Մխիթարեանի հետ առաջին օրէն փորձած եմ կապ հաստատել եւ անձամբ գրուցել անոր հետ: Սկիզբը չեղաւ: Փորձեցի դիմել «Շախտյորի» մէջ անոր խմբակիցներու օգնութեանը, որպէսզի անոր տեղեկացնեն իմ ցանկութեան մասին, բայց ան հրաժարուած է ինձ հետ խօսել: Որոշ ժամանակ անց դիմեցի իմ օգնական Բերեզովսկիին, որ եղած է Մխիթարեանի խմբակիցը, բայց Հենրիխ Մխիթարեանը Բերեզովսկիին ըսած է, որ արդէն ընդունած է իր որոշումը եւ չի ցանկանար այն վերանայել: Ան հրաժարած է ինձ հետ հանդիպիլ: Ես նոյնիսկ պատրաստ եմ եղած մեկնիլ Միլան անոր հետ անձամբ գրուցելու համար, բայց Մխիթարեանը չէ ցանկացած հանդիպում: Ան յայտարարած է, որ վերջնական է իր որոշումը եւ ինքնը աւարտած է իր ելոյթները ազգային հաւաքականին մէջ:

Հայաստանի ազգային հաւաքականը կը պատրաստի Թուրքիոյ դէմ խաղին, որ տեղի պիտի ունենայ Մարտի 25-ին Երեւանի մէջ՝ Եւրոպայի առաջնութեան խմբային մրցաշարի առաջին հանգրուանին:

Մարտի 28-ին Հայաստանի հաւաքականը ընկերական հանդիպում կը կատարէ Կիպրոսի խումբին հետ:

Անգլիոյ Գաւաթ «Մանչեսթըր Եունայթըտ» Յաղթեց «Ֆուլիեմին» Եւ Զասաւ Կիսաեզրափակիչ



«Մանչեսթըր Եունայթըտ» Հասաւ Անգլիոյ գաւաթի խաղարկութեան կիսաեզրափակիչ:

«Եունայթըտ» ընդունեց լոնտոնեան «Ֆուլիեմին» եւ յաղթեց 3:1 արդիւնքով:

Կիսաեզրափակիչին «Մանչեսթըր Եունայթըտի» մրցակիցը պիտի ըլլայ «Պրայմթոնը», որ 5:0 արդիւնքով յաղթած էր «Գրիմսըն Թաունին»:

Կիսաեզրափակիչի միւս զոյգը «Մանչեսթըր Սիթին» ու «Շեֆիլդ Եունայթըտն» են:

«Արսենալի» Յաղթանակը՝ 4:1

Անգլիոյ առաջնութեան 28-րդ հանգրուանին առաջատար «Արսենալ» լոնտոնեան տերպիլի ընթացքին մրցեցաւ «Քրիսթալ Փելասի» հետ եւ յաղթանակի հասաւ 4:1 արդիւնքով:

«Արսենալը» (28 խաղ) 69 կէտով առաջինն է եւ երկրորդ տեղը ընթացող ախոյեան «Մանչեսթըր Սիթիին» (27 խաղ) առաջ է 8 կէտ:

ՄԱՐԱԶԴ



ՆԱԶԱՐԷԹ ԳԵՒՈՆԵԱՆ (Ծնեալ՝ 1941ին, Պէյրուս, Լիբանան)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ հօր, մեծ հօր, եղբօր եւ հարազատին՝ Նազարէթ Գեւորեանի մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 6 Մարտ 2023ին, առաւօտեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Հինգշաբթի, 6 Ապրիլ 2023ին, առաւօտեան ժամը 9:30ին, Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան Church of the Hills մատրան մէջ (սպիտակ եկեղեցի), ապա թաղումը՝ նոյն գերեզմանատան մէջ, 6300 Forest Lawn Dr., Los Angeles, CA 90068:

- Սգակիրներ՝
- Դուստրը՝ Թամար Գեւորեան եւ Սեւան Ապտեւեան եւ դուստրը՝ Երազ
- Ձաւակը՝ Գեղոն եւ Ալեքսիա Գեւորեան եւ զաւակները՝ Ադամ, Սօֆիա եւ Նշան
- Դուստրը՝ Թալին Գեւորեան
- Քոյրը՝ Սօսի Հաննէսեան եւ ընտանիք
- Եղբայրը՝ Րաֆֆի եւ Անժելա Գեւորեան եւ ընտանիք (Սպանիա)
- Քոյրը՝ Արփինէ Գեւորեան եւ ընտանիք (Յունաստան)
- Եւ համայն Գեւորեան, Հաննէսեան, Ապտեւեան, Մատենճիս ընտանիքները, հարազատները, ընկերներն ու բարեկամները

Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել «Ասպարէզ» օրաթերթի «Նազարէթ Գեւորեան» ֆոնտի յատուկ ծրագիրներուն (Armenian Media Network, 1203 N. Vermont Avenue, Los Angeles, CA 90029 – PayPal link: <https://bit.ly/3JII1a>):

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

ՊԵՏՐՈՍ ՍԷՖԻՐԵԱՆԻ մահուան տիտուր առիթով Տէր եւ Տիկ. Յարութ եւ Անի Գասպարեաններ իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի տիկնոջ եւ ընտանեկան պարագաներուն: Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

Նախիջեւանի Յանձնումի Հարիւրամեակը

Շարունակուած էջ 12-էն

Ս. Երրորդութիւն եկեղեցին որ 7-րդ դարու ճարտարապետական ոճի հետքերը կը կրէր, իբրեւ թէ քարերը գործածելու համար Սովետական նորագոյն շրջանի նահատակներու չիշատակին նուիրուելիք չիշատակարաններու շինութեան: 1987-ին նոյն պատճառաբանութեամբ քար ու քանդ ըրին Ագուլիսի գերազմանատունը իր 400 խաչքարերով:

Արգամ Ալվազեանէն բացի Նախիջեւան այցելու մը եւս Արտակ վարդանեան 1986-ին կ'այցելէ Նախիջեւանի Ապրակունեաց շրջանի Ս. Կարապետ վանքը եւ Շահապունիքի Մեծոփ գիւղաւանի Ս. Աստուածածին եկեղեցին, երկուքն ալ քանդուած: Ականատես վարդանեան կը գրէ. «1986 թուին ազերիները անգութօրէն հաներ են եկեղեցւոյ սիւներուն տակ եղող հսկայ քարերը մնալուն կերպով վնասելով կառուցը: Նաեւ Յընայի Ս. Աստուածածին եկեղեցին եւ Ագուլիսի եկեղեցիները առ այսօր կը գործածեն որպէս շտեմարան եւ ախոռ:»

Խաչքարերը եւ Վազգէ Կաթողիկոսի Չայնը Յանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Երջանկայիշատակ Տ.Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս բողոք բարձրացուց լսելով այս բողոքը, յատկապէս երբ տեղեկացաւ հարիւրամեակ խաչքարերու կողպուտն ու այլ շինարարութեանց որպէս քար գործածութիւնը: Ժամանակը տարբեր դասաւորուած էր: Այդ օրերուն Ղարաբաղի եւ Արցախի հանրապետութեան դժուար եւ խառնակ դրութիւնը կը տիրէր Սովետացի իր եղեռնագործութեան հետեւանքով, եւ վեհափառ Հայրապետը իր ցաւն ու ուշքը ուղղած էր դէպի Ղարաբաղ ուր վերահաստատեց Արցախի պատմական թեմը, ձեռնադրելով Պարգեւ եպիսկոպոս Մարտիրոսեանը 1988 թուին որպէս թեմակալ առաջնորդ: Արցախ 1991-էն ի վեր կը գոյատեւէ, եւ սակայն 2020-ի ահաւոր պատերազմը ճգնժամային կացութիւն մը ստեղծած է ու Միացեալ Ազգաց եւ միջազգային ուժերու ազդեցիկ միջամտութիւնը հրաւիրած:

Ընթացք Առաւ Սփիւռքահայ Ուսուցիչներու Վերապատրաստման Ծրագիրը

Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան, գիտութեան, մշակուցի եւ մարմնակրթութեան նախարարութիւնը յայտարարեց սփիւռքի մէջ գործող հայկական եւ հայկական բաղադրիչով ուսումնական հաստատութիւններէ ներս (պետական եւ ոչ պետական վարժարաններ, դպրոցներ, մանկապարտէզներ, լրացուցիչ կրթութեան հաստատութիւններ, միօրեայ կրթօճախներ, մշակութային կեդրոններ, եւ այլն) դասաւանդողներու վերապատրաստման ծրագրի մեկնարկին մասին: 2023 թուականի վերապատրաստման դասընթացները տեղի պիտի ունենան յուլիս 2-էն 29-ը:

- Վերապատրաստումը պիտի ընթանայ Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան, գիտութեան, մշակուցի եւ մարմնակրթութեան նախարարութեան հաստատած միամսեայ հետեւեալ 7 ծրագիրներով՝
- Ուսուցում մանկապարտէզի մէջ
- Ուսուցում միօրեայ դպրոցի մէջ
- Տարրական ուսուցում
- Հայոց լեզուի եւ գրականութեան դասաւանդում
- Հայոց պատմութիւն եւ մշակուցի պատմութիւն
- Պարարուեստ
- Տնօրէններու վերապատրաստում

Դասընթացները աւարտած ուսուցիչներուն պիտի տրամադրուին Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան, գիտութեան, մշակուցի եւ մարմնակրթութեան նախարարութեան վկայագիրներ: Ծրագրին ընթացքին դասընթացներու կազմակերպման, ուսուցիչներու կեցութեան, թանգարանային այցելութիւններու եւ շրջագայութեան ծախսերը, ծրագրի բացման օրուէն մինչեւ փակման օրը, ստանձնած է Հայաստանի Հանրապետութիւնը:

Ճանապարհածախսը, ներառեալ՝ օդանակայանէն մինչեւ հիւրատուն, եւ Հայաստան մուտքի արտոնագրի եւ բժշկական ճանապարհորդական ապահովագրութեան ծախսերը, պիտի հոգան մասնակիցները կամ համապատասխան կազմակերպութիւնները, կրթօճախներն ու բարերարները:

Ծրագրին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչեւ Մայիս 28-ը Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան, գիտութեան, մշակուցի եւ մարմնակրթութեան նախարարութիւն ներկայացնել ուսուցիչին կողմէ լրացուած եւ կրթօճախին տնօրինութեան կողմէ վաւերացուած յայտը (յայտածեւը եւ ծրագիրը պիտի կցուին):

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:-----
 Country: -----
 Tel:-----
 Email: -----

Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services

From Armeno-Turkish to Armenian and English languages.
Bring your family's history back to life!
Family letters, postcards, diaries, and more...

Please reach out for quotes
Website: norayr.daduryan.com
Email: norayrdaduryan@gmail.com

Սփիւռքահայ Կատակերգակ Դերասան-Երաժիշտ Գեւ Օրգեան Լոս Անճելոսի Մէջ



Սփիւռքահայ տաղանդաւոր դերասան, երաժիշտ եւ կատակերգակ Գեւ Օրգեան անցնող շաբաթավերջին հետաքրքրական ելոյթներ ունեցաւ: Միտում արուեստագէտը յատկապէս Անգլիայէն Միացեալ Նահանգներ եկած էր մենահամերգներով հանդէս գալու տար-

բեր քաղաքներու մէջ: Գեւ Օրգեանի մենահամերգներու ծրագրին մաս կը կազմէին նաեւ զոյգ ելոյթներ, որնք տեղի ունեցան Հինգշաբթի, 16 եւ Ուրբաթ 17 Մարտին, 2023, Փասատինայի վաչէ եւ Թամար Մանուկեան կատարողական արուեստի սրահին

մէջ, կազմակերպութեամբ Հայ-Ամերիկեան թանգարանի եւ Մշակութային կեդրոնի հոգաբարձութեան:

Գրեթէ լեցուն սրահին մէջ հաւաքուած արուեստասէր հասարակութիւն մը, շուրջ մէկ ու կէս ժամ տեւողութեամբ եւ մեծ հետաքրքրութեամբ ունկնդրեց ու վայելեց տաղանդաւոր կատակերգակ եւ միջազգային ճանաչում վայելող Գեւ Օրգեանի մենախօսութիւնները: Նշենք նաեւ աշխարհահռչակ արուեստագէտի ելոյթները մեծ հետաքրքրութեամբ դիտուած են նաեւ Անգլիոյ թագաւորական ընտանիքի անդամներուն կողմէ, արժանանալով այդ մարզի քննադատներու բարձր գնահատանքին:

Գեւ Օրգեան, իր եւ հանդիսատեսներու միջեւ առաջին իսկ վայրկեաններէն ստեղծեց դիւրահաղորդ մագնիսական միջոցառում: Ան՝ մէկ շունչով, իր այլազան կերպարներն ու ամենօրեայ կեանքի հետաքրքրական երեւոյթները (ընտանիք, հայրենիք, Արարատ լեռ մագլցիլ, քովիտ, գինետուն, եւ այլն) պատմեց ինքնուրոյն ոճով, սրահէն ներս ստեղծելով խնդուքի

բազմաթիւ պահեր, ներկաներուն մօտ ստեղծելով զուարթ միջոցառում եւ բարձր տրամադրութիւն: Գեւ Օրգեան նաեւ երաժիշտ է եւ շնորհալի դաշնակահար: Ան իր ելոյթին հետ առնչուող եղակներ ալ նուազեց արժանանալով որոտընդոստ ծափահարութիւններու:

Կ'իմամանք թէ տաղանդաշատ արուեստագէտը պատրաստած է վաւերագրական ժապաւէն մը, հայութեան եւ հայրենիքի ու մեր պատմական հողերուն մասին: Գեւ Օրգեան յառաջիկայ շաբաթներուն ելոյթներ պիտի ունենայ ԱՄՆ-ի եւ Անգլիոյ տարբեր քաղաքներուն մէջ:

Երկու տարի ետք՝ 2025ին, Գեւ Օրգեան, իր գեղարուեստ-թատերական գործունէութեան 25-ամեակը պիտի նշէ համերգային մեծ շրջապտոյտով մը, առանց մոռնալու Լաս Վեկասն ու Լոս Անճելոսը: Ան իր մասնակցութիւնը պիտի բերէ նաեւ միջազգային կարգ մը մրցոյթներու:

Նորանոր յաջողութիւններ սփիւռքահայ վաստակաւոր կատակերգակին:

Գ. ՄՈՂՈՅԱՆ

Հայ Ամերիկեան Թանգարան

Շարունակուած էջ 1-էն

ատենապետուհի Տայանա Թիմուրեանի ողջոյնի ելոյթներէն ետք, Սենատոր Էնթոնի Փորթմանթինօ խօսք առնելով, բարձր գնահատեց կառուցման մէջ եղող թանգարանի աշխատանքներն ու անոր բերելիք նպաստը, երկրէն ներս:

Հայ-Ամերիկեան թանգարանի գործադիր տնօրէն՝ Շանթ Սահակեան ամփոփ զեկոյցով լուսաբանեց եւ արժեւորեց թանգարանի շինարարութեան հետ առնչուող զարգացումներն ու յետագայ աշխատանքները:

Կլենտէյլի քաղաքապետ Արտաշէս (Արտի) Քասաբեանը իր անհուն ուրախութիւնը յայտնեց սոյն ազգանուէր եւ կրթանուէր գործին համար, որով կարեւոր ներդրում մըն է ապագայ սերունդներու ինքնութեան պահպանման տեսակէտով:

Յայտագրի գեղարուեստական բաժնին իրենց մասնակցութիւնը բերին Արա պարի համոյթն ու Գեւ Օրգեան (նուագ եւ զուարթ թախօսութիւն):

Թանգարանի այս տարուան բարերարներու մեծագումար ներդրումներուն մասին առանձին ելոյթներով հանդէս եկան Տօքթ.Նազարէթ Տարագճեան, Աւետիս Իգմիրլեան, Գաբրիէլ Մոլոյեան, Տօքթ. Ռաֆֆի Պալեան իրաւաբան Թալին Եագուպեան: Իսկ նուիրատուներն էին Արմէն եւ Կլորիա Համբար Հիմնարկութիւն, Ռիմա եւ Տօնել Գամբերուն, Աւետիս եւ Նենսի Թեւանեան: Նուիրատուներէն ստացուած ընդհանուր գումարը հասած է եօթը միլիոն տոլարի:

Իր փակման խօսքին մէջ մեծ լաւատեսութեամբ արտայայտուեցաւ Հայ-Ամերիկեան թանգարանի ինամակալ Մարմնի գործադիր նախագահ Պերճ Կարապետեան: Ան դրուատելէ ետք ազգապարծան մեծ կառուցի բարեմասնութիւնները իր խորին շնորհակալութիւնները յայտնեց բոլոր բարերարներուն, Տնօրէն Խորհուրդի անդամներուն, ենթակառուցներուն եւ գործող յանձնախումբերուն, որոնք իրենց օտազատ ներդրումով, իրականութիւն դարձուցին այս մեծ նախաձեռնութիւնը:

AGBU

ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION
INVITES YOU TO A

GALA HONORING
Dr. ARDEM PATAPOUTIAN

2021 NOBEL PRIZE LAUREATE
IN PHYSIOLOGY OR MEDICINE

TO **BENEFIT HUMANITARIAN RELIEF IN**
ARTSAKH, LEBANON & SYRIA

SPECIAL ENTERTAINMENT BY GUY MANOUKIAN

SATURDAY, APRIL 15, 2023 | 7:00 PM
BEVERLY WILSHIRE, A FOUR SEASONS HOTEL
9500 WILSHIRE BOULEVARD, BEVERLY HILLS, CALIFORNIA